ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

«ԱԳԱՊԵ ՎՈՐԼԴ» ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Երիտասարդները հանուն իրենց ապագայի» ծրագիր

«Հանրային կյանքում և տեղական ինքնակառավարման ոլորտում երիտասարդների ներգրավվածության գնահատում» հետազոտության արդյունքներ

Սույն զեկույցը մշակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում «Ագապե Վորլդ» Երիտասարդական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Երիտասարդները հանուն իրենց ապագայի» ծրագրի շրջանակներում:

Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Ագապե Վորլդ» երիտասարդական հասարակական կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆ
COMMITMENT TO CONSTRUCTIVE DIALOGUE

AW AGAPE WORLD NGO

3/30/2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 3

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՔԱՐՏԵԶ 6

ԲԱԺԻՆ 1: ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 7

1.1 ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԵՍԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ 8

1.2 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐ 10

1.3 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ ԵՎ ԸՆՏՐԱՆՔ 11

ԲԱԺԻՆ 2: ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ. ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 17

2.1. ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ԸՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ 18

2.2 ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ... 21

ԲԱԺԻՆ 3: ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿՅԱՆՔՈՒՄ 26

3.1 ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԻՐԱՁԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՏԻՄ-ԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿՅԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 27

3.2 ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԿՅԱՆՔԻՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ 32

3.3 ՏԻՄ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ 39

ԲԱԺԻՆ 4: ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՎ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ 44

4.1 ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ԵՎ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ 45

4.2 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿՅԱՆՔՈՒՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ 49

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 53

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀԶԾ	Համայնքային զարգացման ծրագիր
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՏԱՊ	Տարեկան աշխատանքային պլան
ՖԽՔ	Ֆոկուս խմբային քննարկում

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում տարբեր ժամանակներում իրականացված երիտասարդական մի շարք հետազոտություններ փաստում են, որ քաղաքականությունների մշակման և որոշումների կայացման գործընթացներին երիտասարդության ներգրավումը անբավարար մակարդակի վրա է, և երիտասարդներն իրենց ներուժն ամբողջապես կիրառելու սահմանափակ հնարավորություններ ունեն: Համաձայն Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտի կողմից իրականացված «Հայաստանի երիտասարդների ձգտումները եվ ակնկալիքները» զեկույցի՝ հասարակական կյանքի տարբեր ոլորտներում երիտասարդների մասնակցության բավականին ցածր ցուցանիշներ են արձանագրվել: Երիտասարդների գերակշիռ մասը ներկայումս չի ցանկանում ներգրավվել ՏԻՄ-երի, ՀԿ-ների, քաղաքացիական նախաձեռնող խմբերի աշխատանքներում, իսկ այս կառույցներում ներգրավվել չցանկանալու ամենատարածված հիմնավորումներն են «հետաքրքիր չլինելը», «իմ ներգրավվածությունը ոչինչ չի փոխի» կանխադրույթը, «ժամանակի սղությունը»: Երիտասարդների՝ հանրային և համայնքային կյանքում մասնակցության ցածր ցուցանիշները բացատրվում է սեփական խնդիրների լուծման վրա կենտրոնացվածությամբ, ինչպես նաև մասնակցության արդյունքների նկատմամբ ունեցած թերահավատությամբ[1]: Այս հիմնախնդիրները զուգորդվում է հատկապես մարզային բնակավայրերում երիտասարդների համար նախատեսված զբաղվածության և սոցիալ-մշակութային տարածքների սահմանափակությամբ, ինչի արդյունքում մարզային համայնքներում բնակվող երիտասարդների ներուժը մնում է չիրացված:

Վերոնշյալ հիմնախնդիրները բնորոշ են նաև ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ խոշորացված համայնքի երիտասարդությանը: Համայնքը խոշորացվել է 2017 թվականին՝ ընդգրկելով Ճամբարակ քաղաքային, Այգուտ, Անտառամեջ, Գետիկ, Դպրաբակ, Թթուջուր, Կալավան, Ձորավանք, Մարտունի, Վահան գյուղական համայնքները և Արծվաշեն բնակավայրը: Ներկայումս համայնքում բնակվում են 18-ից 35 տարեկան շուրջ 1,600 երիտասարդներ, որոնց շուրջ 60%-ը կենտրոնացած է Ճամբարակ քաղաքային բնակավայրում:

Ճամբարակ խոշորացված համայնքում 2019թ. հունվար-մարտ ամիսներին իրականացվել է «Հանրային կյանքում և տեղական ինքնակառավարման ոլորտում երիտասարդների ներգրավվածության գնահատում» հետազոտական ծրագիրը՝ ուղղված Ճամբարակ խոշորացված համայնքում հանրային կյանքում և տեղական ինքնակառավարման ոլորտում երիտասարդների ներգրավվածության ուսումնասիրությանը: Հետազոտությունն իրականացվել է «Ագապե Վորլդ» երիտասարդական հասարակական կազմակերպության կողմից «Երիտասարդները հանուն իրենց ապագայի» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում: Դրամաշնորհային ծրագրի նպատակն է նպաստել Ճամբարակ խոշորացված համայնքում երիտասարդների հանրային մասնակցության խթանմանը և հանրային ազդեցության մեծացմանը՝ իրականացնելով երիտասարդների ներգրավվածության գնահատում և հանրային ֆինանսների մոնիտորինգ: Դրամաշնորհային ծրագրի վերջնական արդյունքը լինելու է համայնքում երիտասարդական քաղաքականության մշակումը և այդ քաղաքականության ջատագովությունը: Դրամաշնորհային ծրագիրն իրականացվում է «Ագապե Վորլդ» երիտասարդական ՀԿ-ի կողմից՝ «Իրավաբանների

[1] Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտ, «Հայաստանի երիտասարդների ձգտումները եվ ակնկալիքները» զեկույց, Երևան 2012թ.

հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում: «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Այս հետազոտական ծրագրի հիմնական նպատակն է պարզել, թե որքանով են երիտասարդները ներգրավված քաղաքականությունների մշակման, իրականացման և գնահատման ոլորտներում: Հետազոտական խնդիրների բացահայտման համար անհրաժեշտ տեղեկատվությունը ստացվել է որակական և քանակական մեթոդների համադրությամբ: Հետազոտության շրջանակներում կիրառվել է երիտասարդների հետ քանակական դեմ առ դեմ հարցումների մեթոդը՝ ընդհանուր առմամբ ընտրանքում ներառելով 309 երիտասարդների: Իրականացվել է նաև խորին հարցազրույցներ առանցքային տեղեկատուների հետ և ֆոկուս խմբային քննարկումներ համայնքային երիտասարդների հետ: Բացի այդ փաստաթղթերի վերլուծության մեթոդով իրականացվել է համայնքային զարգացման ծրագրերի, տարեկան ֆինանսական հաշվետվությունների և պլանների, իրականացված երիտասարդական միջոցառումների հաշվետվությունների ուսումնասիրություն:

Հետազոտական աշխատանքներում ներգրավվել են համայնքում բնակվող երիտասարդներից բաղկացած քաղաքացի-մոնիտորների խումբ, ինչն էլ իր հերթին նպաստել է ներգրավված երիտասարդների կարողությունների ավելացմանը: Նախատեսվում է, որ հետազոտության արդյունքների կիրառությամբ կմշակվի համայնքի երիտասարդական քաղաքականության նախագիծ, որն էլ հետագայում կներկայացվի տեղական ինքնակառավարման մարմիններին ներդրման և իրականացման համար:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՔԱՐՏԵԶ

Ուսումնասիրության ոլորտներ՝

- Երիտասարդների իրազեկվածություն, դիրքորոշումներ, մասնակցություն ՏԻՄ և համայնքային կյանքում
- երիտասարդների մասնակցությունը խոչընդոտող գործոններ, կարողությունների և հմտությունների կարիքներ
- Իրականացված երիտասարդական ծրագրեր և գործողություններ
- ՏԻՄ համայնքային զարգացման ծրագրում և բյուջեում երիտասարդներին ուղղված դրույթներ և ծրագրեր
- Երիտասարդների ներգրավվածության խթանման հեռանկարներ

Կիրառված մեթոդներ

- Քանակական կիսաստանդարտացված դեմ առ դեմ հարցումներ
- Ֆոկուս խմբային քննարկումներ
- Խորին հարցազրույցներ առանցքային տեղեկատուների հետ
- Փաստաթղթերի վերլուծություն

Դաշտային աշխատանքների իրականացում

- Դաշտային աշխատանքներում ներգրավված Ճամբարակ համայնքի բնակիչ **12 քաղաքացի-մոնիտորներ**

Հետազոտության ընտրանքը

- **309 քանակական դեմ առ դեմ հարցումներ** 18-ից 35 տարեկան երիտասարդների շրջանում պատահական ընտրանքի մեթոդով
- Ֆոկուս խմբային քննարկում համայնքի բնակիչ 18-ից 35 տարեկան երիտասարդների հետ՝ ընդհանուր թվով **12 ՖԽՔ-ներ** յուրքանչյուր բնակավայրում
- **12 խորին հարցազրույց** առանցքային տեղեկատուների հետ
- Փաստաթղթերի ուսումնասիրության շրջանակներում ներառվել են համայնքային բյուջեները, համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը և ՏԻՄ աշխատանքային պլաններ (2018թ.-2019թ.)

Հետազոտության աշխարհագրություն

- Հետազոտությունն իրականացվել է ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ խոշորացված համայնքում՝ ներառելով համայնքի մաս կազմող բոլոր բնակավայրերը:

ԲԱԺԻՆ 1: ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1.1 ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԵՍԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Հանրային մասնակցությունը կառավարման սկզբունք է, որի միջոցով շահագրգիռ կողմերն ազդություն են ունենում իրենց առնչվող գործընթացների վրա: Այն մի կողմից քաղաքացիների և մյուս կողմից կառավարման մարմինների միջև երկկողմանի փոխազդեցություն է այնպիսի եղանակով, որ քաղաքացիները որոշումների կայացման գործընթացում ստանում են ձայնի իրավունք՝ ուղղված զարգացման բարելավմանը: Տեղական ինքնակառավարումը մի մեխանիզմ է, որի միջոցով հանրությունն ուղղակի և անուղղակի միջոցներով ապահովում է կառավարման գործում իր մասնակցությունը: Տեղական ինքնակառավարմանը հանրային մասնակցության խթանումն եղել է և շարունակում է լինել զարգացման նախաձեռնությունների հիմնական բաղադրիչներից մեկը, որի վերջնանպատակն է հասնել «ավելի լավ» կառավարման:

Ներկայումս զարգացման ծրագրերը, կառավարական գործընթացները, քաղաքացիական հասարակության կազմակերպությունները և սոցիալական շարժումները մշտապես խրախուսում են կառավարման մեջ երիտասարդների մասնակցությունը: Այսպիսի նախաձեռնությունները հիմնվում են այն ենթադրության վրա, որ հանրային մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը դրական է անդրադառնում այս մարմինների հաշվետվողականության, թափանցիկության, նրանց նկատմամբ վստահության բարձրացման վրա և ի վերջո այսպիսի գործընթացները նպաստում են կառավարման արդյունավետության բարձրացմանը: Սակայն միևնույն ժամանակ անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրել, թե ինչպիսի դիրքորոշումներ ունեն երիտասարդները տեղական ինքնակառավարմանը և համայնքային կյանքում մասնակցության նկատմամբ, որքանով են նրանք պատրաստակամ լինել այսպիսի գործընթացների մի մասը:

ՏԻՄ-երում և հանրային կյանքում երիտասարդների ներգրավվածությունը պայմանավորված է մի շարք գործոններով, որոնք կապված են ինչպես երիտասարդների ներքին սոցիալ-մշակույթային և անձնային ոլորտների հետ, այնպես էլ արտաքին՝ այսպես կոչված նպաստող և խոչընդոտող գործոնների հետ: Առկա են նաև միջանկյալ այսպես կոչված «կապող» գործոններ, որոնք ապահովում են համայնքային կառավարման և երիտասարդների միջև կապը: Եթե փորձենք այս գործոնները ընդհանրացնել, ապա այն կարող ենք ներկայացնել որպես երեք մակարդակներում գնահատվող գործոններ՝

Ներգրավվածությունը նախապայմանավորվող գործոններ անհատական կամ անձնային մակարդակում

Այս մակարդակում երիտասարդների ներգրավվածությունը նախապայմանավորվող գործոնները գնահատելու համար այն կարող ենք ներկայացնել որպես որպես մի կոնստրուկտ, որը բաղկացած է երեք բաղադրիչներից՝

- **Առաջին բաղադրիչ՝ «իրազեկվածություն կամ ճանաչողություն»:** Այս բաղադրիչը հանդիսանում է մասնակցությունը նախապայմանավորող առաջին աստիճանը: Որքան ավելի իրազեկված են երիտասարդները ՏԻՄ-երի և համայնքային կյանքում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ, այնքան ավելի հավանական է դառնում մասնակցությունը

և ներգրավվածությունը: Այս բաղադրիչի միջոցով կգնահատվի, թե որքանով են երիտասարդները իրազեկված ՏԻՄ-երի աշխատանքին և իրենց համայնքային կայնքում տեղի ունեցող իրադարձություններին:

- **Երկրորդ բաղադրիչ՝ «զգացմունքներ կամ գնահատականներ»:** Այս բաղադրիչով գնահատվում է, թե ինչպիսի ընկալումներ, դիրքորոշումներ ունեն երիտասարդները հանրային մասնակցության վերաբերյալ, ինչպես են վերաբերվում ՏԻՄ-երում և հանրային կյանքում ներգրավվածությանը:

- **Երրորդ բաղադրիչը՝ «վարքը կամ գործողությունը»:** Այս բաղադրիչով կգնահատվի, թե փաստացի ինչպիսի մասնակցություն ունեն երիտասարդները հանրային և համայնքային կյանքում, արդյոք նրանք մասնակցել են տեղական ինքնակառավարմանը վերաբերող այնպիսի միջոցառումների ինչպիսիք են ավագանու նիստերը, հանրային քննարկումները և այլն:

Մասնակցությունը նախապայմանավորվող արտաքին գործոններ

- **ՏԻՄ-երում և հանրային կյանքում երիտասարդների մասնակցությանը խթանող ֆորմալ մեխանիզմների առկայություն:** ՏԻՄ-երում և հանրային կյանքում երիտասարդների մասնակցությունը խթանող ֆորմալ մեխանիզմները ներառում են համայնքապետին կից երիտասարդական խորհրդակցական մարմինը, երիտասարդական քաղաքականությունը, երիտասարդական ծրագրերը և միջոցառումները:

- **ՏԻՄ-երում երիտասարդների մասնակցությանը խթանող ոչ ֆորմալ մեխանիզմների առկայություն:** ՏԻՄ-երում և հանրային կյանքում երիտասարդների մասնակցությունը խթանող ոչ ֆորմալ մեխանիզմները ներառում են երիտասարդական նախաձեռնող խմբերը, հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերը:

Մասնակցությունը նախապայմանավորվող միջանկյալ գործոններ

- **Երիտասարդների իրազեկվածությունը խթանող մեխանիզմներ:** Այսպիսի մեխանիզմները ներառում են ՏԻՄ, երիտասարդական խմբերի և հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումները, ինչպես օրինակ տեղեկատվական հավաքներն են, հրապարակվող հայտարարությունները, սոցիալական ցանցերը և այլն:

1.2 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐ

Հետազոտության նպատակն է իրականացնել Գեղարքունիքի մարզի Ճամբարակ խոշորացված համայնքում հանրային կյանքում և տեղական ինքնակառավարման ոլորտում 18-35 տարեկան երիտասարդների ներգրավվածության գնահատում:

Հետազոտության առջև դրված խնդիրները ներառում են հետևյալը՝

- Ուսումնասիրել, թե որքանով են Ճամբարակ համայնքում երիտասարդները իրազեկված Ճամբարակ համայնքում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության և համայնքային կյանքի վերաբերյալ:
- Ուսումնասիրել, թե որքանով են Ճամբարակ համայնքում երիտասարդները մասնակցում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությանը և հանրային քաղաքականության մշակմանը,
- Ուսումնասիրել, թե որքանով են երիտասարդները ներգրավված համայնքում իրականացվող միջոցառումներին, ծրագրերին և նախաձեռնություններին,
- Ուսումնասիրել, թե որոնք են ՏԻՄ-երում և համայնքային կյանքում երիտասարդների մասնակցությանը խոչընդոտող հիմնական գործոնները,
- Պարզել, թե ՏԻՄ-երում և իրականացվող հանրային քաղաքականություններում մասնակցության համար ինչպիսի կարողությունների և հմտությունների կարիք ունեն երիտասարդները:
- Պարզել, թե ըստ երիտասարդների, որ պայմանների առկայության պարագայում հնարավոր կլինի ավելացնել երիտասարդների ներգրավվածությունը և մասնակցայնությունը:
- Պարզել, թե ՏԻՄ ներկայացուցիչներն ինչպիսի հեռանկարներ են տեսնում երիտասարդների մասնակցայնության ավելացման ուղղությամբ:
- Ուսումնասիրել, թե ինչպիսի երիտասարդական ծրագրեր են իրականացվում Ճամբարակում համայնքում միջազգային կազմակերպությունների և այլ դոնոր կազմակերպությունների կողմից, ինչպիսի մասնակցություն է արձանագրվում և ինչպիսի հեռանկարներ կան:
- Իրականացնել ՏԻՄ-ի գործունեության մոնիթորինգ՝ համայնքային բյուջե, հնգամյա զարգացման ծրագիր և ՏԻՄ աշխատանքային պլանները՝ հաշվի առնելով երիտասարդներին ուղղված միջոցառումները
- Ուսումնասիրել, թե ՏԻՄ ապարատում որքանով են ներկայացված երիտասարդները:

1.3 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ ԵՎ ԸՆՏՐԱՆՔ

Հաշվի առնելով հետազոտության նպատակները և հետազոտության առջև դրված խնդիրները և ուսումնասիրվող հարցերը՝ իրականացվել է հետազոտական մեթոդների տրանգուլյացիա (հետազոտվող օբյեկտի մասին տեղեկատվություն հավաքել մի քանի մեթոդների կիրառումով)՝ ներառելով ինչպես որակական մեթոդներ, այնպես էլ քանակական: Հետազոտության շրջանակներում կիրառվել են հետևյալ մեթոդները՝ քանակական կիսաստանդարտացված դեմ առ դեմ հարցումներ և ֆոկուս խմբային քննարկումներ համայնքի բնակիչ երիտասարդների շրջանում, խորին հարցազրույցներ առանցքային տեղեկատուների հետ և փաստաթղթերի վերլուծություն: Հետազոտական մեթոդներն առավել մանրամասն ներկայացված են ստորև՝

ՔԱՆԱԿԱԿԱՆ ԴԵՄ ԱՌ ԴԵՄ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Հետազոտության իրականացման մեթոդներից մեկը ներառում է Ճամբարակ խոշորացված համայնքի երիտասարդների շրջանում **քանակական դեմ առ դեմ հարցումների** մեթոդը: Քանակական դեմ առ դեմ հարցումները անդրադառնում են ՏԻՄ-երում և հանրային կյանքում երիտասարդների իրազեկվածությանը, մասնակցությանը, դիրքորոշումներին և երիտասարդների առաջարկություններին: Քանակական դեմ առ դեմ հարցումների իրականացման համար կիրառվել է կիսաձևայնացված հարցաթերթ:

Հետազոտության ընտրանք: Գլխավոր համախմբությունը ներառում է Ճամբարակ խոշորացված համայնքում մշտական բնակվող (նվազագույնը մեկ տարի) 18-ից 35 տարեկան բնակչությունը: Հետազոտության համար կիրառվել է պատահական ընտրանքի տիպը: Այն համամասնական բաշխվել է թիրախային խմբի բնակչության թվին ըստ բնակավայրերի:

Սահմանելով գլխավոր համախմբությունը որպես ընտրված համայնքում մշտական բնակություն հաստատած 18-ից 35 տարեկան բնակչությանը, գլխավոր համախմբության ծավալը կազմել է 1,569 բնակիչ[2]: Երբ N=1,569, γ=95% և Δ=±3.25, իսկ 50%՝ պատասխանների բաշխման համար, ապա ընտրանքի ծավալը կազմել է՝ n=309: Ընտրանքի հաշվարկը կատարվել է այն ենթադրությամբ, որ խոշորացված համայնքի բնակավայրերում թիրախ բնակչության սեռատարիքային բաշխվածությունը նույնն է բոլոր բնակավայրերի համար: Խոշորացված համայնքների ներսում հարցումների քանակը առանձին բնակավայրերում բաշխվել է թիրախ բնակչության թվին համամասնորեն՝ կիրառելով որոշակի ճշգրտումներ: Համապատասխանաբար վերջնական ընտրանքի բաշխումն ըստ առանձին բնակվայրերի ներկայացված է Աղյուսակ 1-ում:

Բնակավայր	Բնակավայրերում 18-ից 35 տարեկան բնակչության թիվը	Ընտրանքի բաշխումն ըստ բնակավայրերի
ք. Ճամբարակ	950	172
Անտառամեջ	35	11
Ձորավանք	40	12
Կալավան	40	12
Դպրաբակ	64	15
Այգուտ	73	14
Մարտունի	58	11
Գետիկ	60	12

[2] Թիրախ բնակչության թիվը ներկայացված է ըստ համայնքապետարանի կողմից տրամադրված տվյալների

Թթուջուր	130	26
Վահան	119	24
Ընդհանուր	**1,569**	**309**

Աղյուսակ 1: Ընտրանքի բաշխումն ըստ ճամբարակ խոշորացված համայնքի բնակավայրերի

Ընտրանքային քայլ: Բնակավայրերում իրականացվող հարցումները բաշխվել են այնպես, որ հնարավորինս ներառված են եղել բնակավայրերի և՛ կենտրոնական հատվածները, և՛ երկրորդական ու ծայրամասային հատվածները: Հարցազրուցավարներին նախօրոք տրվել են այն փողոցները (սկզբնակետերը), որտեղից վերջիններս սկսել են հարցումների իրականացումը: Որպես ընտրանքային քայլ սահմանվել է երեք քայլը սեփական տների փողոցների համար, ինչը նշանակում է, որ որևէ տնային տնտեսությունում հարցում իրականացնելու դեպքում հաջորդ տնային տնտեսությունը ընկած է եղել հարցում արված տնային տնտեսությունից երեք տուն հեռավորության վրա: Յուրաքանչյուր տնային տնտեսությունում իրականացվել է միայն մեկ հարցում:

Տնային տնտեսությունում հարցվողի ընտրությունը: Տնային տնտեսություններում հարցումները իրականացվել են պատահական ընտրանքի սկզբունքով, իսկ ռեսպոնդենտի անհասանելի լինելու պարագայում կիրառվել է փոխարինման սկզբունքը: Եթե ընտրանքային քայլով ընտրված տնային տնտեսությունում բնակվել են մեկից ավել երիտասարդներ, ապա հարցվող երիտասարդի ընտրությունը իրականացվել է առավել մոտ ծննդյան օր ունեցող բնակչի սկզբունքով:

Հետազոտության գործիք: Քանակական դեմ առ դեմ հարցման անցկացման համար մշակվել է կիսաձևայնացված հարցաթերթ: Հարցաթերթը բաղկացած է եղել 3 թեմատիկ բլոկերից՝ ընդհանուր առմամբ 23 թեմատիկ հարց: Հետազոտության համար մշակված նախնական հարցաթերթը ենթակվել է պիլոտավորման՝ ընդհանուր առմամբ հետազոտության ընտրանքի 2%-ի չափով (8 հարցաթերթ): Ըստ պիլոտավորման արդյունքների մշակված հարցաթերթը փոփոխվել և վերջնականացվել է:

Քաղաքացի-մոնիտորների վերապատրաստում: Հետազոտության դաշտային աշխատանքները իրականացվել են մասնակցային մոնիթորինգի սկզբունքներով՝ դաշտային աշխատանքներում ներգրավելով համայնքի երիտասարդներին և վերապատրաստելով նրանց որպես քաղաքացի-մոնիտորներ: Ընդհանուր առմամբ ներգրավվել են 12 երիտասարդներ որպես քաղաքացի-մոնիտորներ: Երիտասարդները ներգրավվել են նաև համայնքային զարգացման ծրագրի, բյուջեի, ֆինանսական հաշվետվությունների մոնիթորինգային աշխատանքներում: Իրականացվել է ՀԿ-ի կողմից հավաքագրված երիտասարդների ուսուցում: Դասընթացին երիտասարդները ծանոթացել են հետազոտության մեթոդաբանությանը, գործիքներին, ինչպես նաև գործնական վարժությունների միջոցով փորձարկել են մշակված գործիքները:

Ստացված տվյալների որակի ստուգում: Հավաքագրված տվյալների որակի բարձրացման և տվյալների նկատմամբ վստահելիության ապահովման համար հարցաթերթերի 10%-ը պատահականության սկզբունքով ենթարկվել է ստուգման, որոնցից 5%-ը համակարգողների հետ զուգահեռ այցելությունների և հետադարձ այցերի (15 հարցաթերթ), իսկ մնացած 5%-ը՝ հեռախոսային ստուգիչ զանգերի միջոցով (15 հարցաթերթ):

Հետազոտության շրջանակներում ներգրավված երիտասարդների սոցիալ-ժողովրդագրական տվյալները: Հարցման ենթարկված երիտասարդների 44%-ը եղել են արական սեռի ներկայացուցիչներ, 56%-ը՝ իգական: Հետազոտության ընտրանքում ներգրավված երիտասարդների միջին տարիքը եղել է 27 տարեկան: Ընդհանուր առմամբ հարցման ենթարկված երիտասարդների 20%-ը եղել են 18-22 տարեկան տարիքային խմբից, 49%-ը՝ 23-ից 30 տարեկան, իսկ 31%-ը՝ 31-35 տարեկանների (Գրաֆիկ 1):



Գրաֆիկ 1. Հարցման ենթարկված երիտասարդների կազմն ըստ տարիքային խմբերի

Ըստ կրթական խմբերի հարցման ենթարկված երիտասարդների կազմը ներկայացված է Գրաֆիկ 2-ում: Հարցման ենթարկված երիտասարդների կեսն ունեցել են միջնակարգ կրթություն: Հաջորդիվ՝ երիտասարդների 27%-ն ունեցել են բարձրագույն մասնագիտական կրթություն, իսկ 13%-ը՝ միջին մասնագիտական: Երիտասարդների 6%-ն ունեցել են նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն, իսկ ընդհանուր առմամբ 4%-ը՝ կա՛մ տարրական, կա՛մ հիմնական կրթություն (Գրաֆիկ 2):



Գրաֆիկ 2. Հարցման ենթարկված երիտասարդների կազմն ըստ կրթական մակարդակի

Ինչ վերաբերում է հարցման ենթարկված երիտասարդների ընտանեկան կարգավիճակին, ապա երիտասարդների 40%-ը հետազոտության իրականացման պահին եղել են չամուսնացած, իսկ մնացած 60%-ը՝ ամուսնացած:



Գրաֆիկ 3. Հարցման ենթարկված երիտասարդների կազմն ըստ զբաղվածության ոլորտների

Ինչ վերաբերում է հարցման ենթարկված երիտասարդների կազմին ըստ զբաղվածության ոլորտների, ապա հարցման ենթարկված երիտասարդների 32%-ը կազմել են տնային տնտեսություն վարողները: Հարցման ենթարկված երիտասարդների 23%-ը նշել են, որ իրենք գործազուրկ են: Պետական ոլորտում ծառայող մասնագետների խումբը կազմել է 15%, իսկ մասնավոր ոլորտում՝ 13%: Երիտասարդների 5%-ը կազմել են դպրոցականները կամ ուսանողները: Հարցման ենթարկված երիտասարդների 4%-ը եղել է գյուղատնտեսության ոլորտում ինքնազբաղված, 4%-ը՝ ինքնազբաղված այլ ոլորտում, իսկ 3%-ը՝ սեզոնային/արտագնա աշխատանքային գործունեությամբ զբաղված: Հարցման ենթարկված երիտասարդների կազմն ըստ զբաղվածության ոլորտների ներկայացված է Գրաֆիկ 3-ում:



Գրաֆիկ 4. Հարցման ենթարկված երիտասարդների կազմն ըստ սեփական եկամուտների

Հարցման ենթարկված երիտասարդների 31%-ը նշել է, որ եկամուտների որևէ աղբյուր չունի: Երիտասարդների միջին ամսական եկամուտը 17%-ի դեպքում կազմել է 50.000 ՀՀԴ-ից պակաս, իսկ 22% դեպքերում կազմել է 50,000-ից 100,000 ՀՀԴ: Ընդհանուր առմամբ հարցման ենթարկված երիտասարդների միայն 20%-ի միջին ամսական եկամուտն է կազմել 100,000-ից ավել, ընդ որում, այստեղ մեծ կշիռ են կազմում 100,000-ից 200,000 ՀՀԴ սահմաններում եկամուտ

ունեցող երիտասարդները, որոնք կազմում են ընդհանուր առմամբ հարցման ենթարկվածների 16%-ը: Երիտասարդների միայն 4%-ն է ամսական կտրվածքով ստանում 200,000 ՀՀԴ-ից ավել եկամուտ (Գրաֆիկ 4):



Գրաֆիկ 5. Հարցման ենթարկված երիտասարդների ընտանիքների սոցիալական վիճակը

Հարցման ենթարկված երիտասարդների 8%-ը նշել է, որ իրենց «ընտանիքի եկամուտը չի բավականացնում սնունդ գնելու համար», 18%-ը, որ «ընտանիքի եկամուտը բավականացնում է սնունդ, բայց ոչ հագուստ գնելու համար»: Երիտասարդների 59%-ը նշել է, որ իրենց ընտանիքի եկամուտը բավականացնում է սնունդ և հագուստ, բայց ոչ թանկարժեք կենցաղային տեխնիկա, օրինակ՝ սառնարան կամ լվացքի մեքենա գնելու համար, մինչդեռ 15%-ը համարում է, որ ընտանիքի եկամուտը բավականացնում է թանկարժեք կենցաղային տեխնիկա, օրինակ՝ սառնարան կամ լվացքի մեքենա գնելու համար: Հարցման ենթարկված երիտասարդների միայն 1%-ն է նշել, որ ընտանիքի եկամուտը բավականացնում է մեքենա կամ բնակարան գնելու համար (Գրաֆիկ 5):

ՖՈԿՈՒՍ ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԵՏ

Հետազոտության շրջանակներում իրականացվել է ֆոկուս խմբային քննարկումներ համայնքում բնակվող երիտասարդների շրջանում: Ընդհանուր առմամբ իրականացվել է 12 խմբային քննարկում՝ ներառելով մեկ ՖԽՔ յուրաքանչյուր խոշորացված բնակավայրում: Միջինում մեկ ֆոկուս խմբային քննարկմանը մասնակցել են 10 երիտասարդներ: Ֆոկուս խմբերում ներառվել են տարբեր տարիքային խմբերի և սեռի երիտասարդներ: Ընդհանուր առմամբ նաև ապահովվել է, որ ֆոկուս խմբերում մասնակցեն հնարավորինս տարբեր զբաղվածություն և ընտանեկան կարգավիճակ ունեցող երիտասարդներ՝ աշխատող, ուսանող, տնտեսապես ոչ ակտիվ, գործազուրկ, արտագնա աշխատանքի մեկնող, երեխաներ ունեցող և այլն:

ԽՈՐԻՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆԵՐԻ ՀԵՏ

Իրականացվել են խորին հարցազրույցներ առանցքային տեղեկատուների հետ՝ ներառելով համայնքի ղեկավարին, ավագանու անդամներին, համայնքի զարգացման ծրագրերի

պատասխանատուին, այն միջազգային և դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչներին, որոնք ծրագրեր են իրականացնում Ճամբարակ համայնքում, մարզպետարանի համապատասխան բաժնի աշխատակիցներին: Ընդհանուր առմամբ իրականացվել է 12 խորին հարցազրույց առանցքային տեղեկատուների հետ: Խորին հարցազրույցները իրականացվել են նախապես մշակված ուղեցույցի հիման վրա:

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ

Փաստաթղթերի վերլուծության մեթոդով ուսումնասիրվել է համայնքային զարգացման ծրագիրը, տարեկան ֆինանսական հաշվետվությունները և պլանները, երիտասարդական քաղաքականության շրջանակներում իրականացված միջոցառումների հաշվետվությունները: Այս փաստաթղթերի վերլուծության հիմնական նպատակն է ուսումնասիրել, թե որքանով են տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց քաղաքականություններում և ծրագրերում անդրադառնում երիտասարդներին և նրանց կարիքներին:

ԲԱԺԻՆ 2: ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ. ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ԸՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ

Ճամբարակ համայնքի երիտասարդների հիմնախնդիրների մասին առավել լավ պատկերացում կազմելու համար ֆոկուս խմբային քննարկումների և քանակական դեմ առ դեմ հարցումների միջոցով դուրս են բերվել համայնքային այն հիմնախնդիրները, որոնք առավել առանջնային են երիտասարդների համար: Ընդհանուր առմամբ ֆոկուս խմբային քննարկումների ընթացքում երիտասարդների կողմից ներկայացված համայնքային հիմնախնդիրները կարող ենք ներկայացնել հետևյալ երեք հիմնական ուղղություններով՝ **1.համայնքային ենթակառուցվածքների ոչ բարվոք վիճակ կամ բացակայություն, 2.զբաղվածության և աշխատատեղերի բացակայություն համայնքում, 3. սոցիալ-մշակութային կյանքի պասիվություն:**

Համայնքային ենթակառուցվածքների հետ կապված երիտասարդների կողմից բարձրաձայնված հիմնական հիմնախնդիրները վերաբերել են ներհամայնքային ճանապարհների ոչ բարեկարգ լինելուն, աղբահանության համակարգի թերություններին, տրանսպորտային համակարգի թերզարգացվածությանը, գյուղատնտեսական տեխնիկայի անհասանելիությանը, փողոցային լուսավորության բացակայությանը, ջրամատակարարման համակարգի խափանումներին և այլն: Երիտասարդ ծնողների կողմից առանձնացվել է նաև բնակավայրերում մանկական խաղահրապարակների բացակայության խնդիրը, ինչի պատճառով ծնողները չեն կարողանում կազմակերպել երեխաների հետաքրքիր առօրյան: Այգուտ բնակավայրում երիտասարդները բարձրացրել են նաև գյուղի տարածքում սողանքների առկայության խնդիրը, ինչի պատճառով մի շարք ընտանիքներ ստիպված են եղել տեղահանվել:

Աշխատանքի հնարավորությունների և աշխատատեղերի բացակայությունը երիտասարդների կողմից շեշտադրված առավել կարևոր հիմնախնդիրներից մեկն է, որի մասին բարձրաձայնվել է բոլոր բնակավայրերում տեղի ունեցած ֆոկուս խմբային քննարկումների ընթացքում: Այս հիմնախնդրով է պայմանավորված, որ երտասարդները հիմնականում մեկնում են արտագնա աշխատանքի, ինչպես նաև նրանց շրջանում նկատելի է մշտական արտագաղթի միտումներ համայնքից: Համաձայն առանցքային տեղեկատուների հետ խորին հարցազրույցների՝ երիտասարդները հակված չեն զբաղվել գյուղատնտեսական աշխատանքներով և այն չեն ընկալում որպես հիմնական զբաղվածության ոլորտ: Մյուս կողմից երիտասարդները նշել են, որ համայնքում առկա է որակյալ կադրերի պակաս, քանի որ բարձր մասնագիտական որակներ ունեցող երիտասարդները հիմնականում լքում են համայնքը, ինչի արդյունքում նվազում է համայնքի աշխատանքային ներուժը:

Սոցիալ-մշակութային կյանքի կազմակերպման առումով երիտասարդները հատկապես կարևորել են սպորտային դահլիճների, մշակութային և ժամանցի վայրերի բացակայության հիմնախնդիրը և սպորտային ու մշակութային միջոցառումների սակավությունը համայնքում: Համաձայն երիտասարդների՝ ժամանցի վայրերի բացակայությունը մի կողմից հանգեցնում է նրան, որ երիտասարդները չեն կարողանում հետաքրքիր կազմակերպել իրենց առօրյան, մյուս կողմից առավել քիչ են սոցիալիզացվում և շփվում իրենց հասակակիցների հետ: Երիտասարդները նաև կարևորել են համայնքում կրթական կենտրոնների բացակայությունը, ինչպես օրինակ օտար լեզուների ուսուցման կենտրոններն են, արհեստագործական խմբակները և այլն:

Գրաֆիկ 6. Համայնքային հիմնախնդիրներն ըստ երիտասարդների կողմից տրված պատասխանների

Համաձայն քանակական դեմ առ դեմ հարցումների արդյունքների՝ երիտասարդների կողմից առավել հաճախ նշված համայնքային հիմնախնդիրները վերաբերում են համայնքում **գործազրկության առկայությանը և աշխատատեղերի բացակայությանը** (հնչած պատասխանների տարբերակների 21% դեպքում), որին հետևում են **ճանապարհների ոչ բարեկարգ վիճակը** (հնչած պատասխանների տարբերակների 16% դեպքում) և **ժամանցի վայրերի բացակայությունը** համայնքում (հնչած պատասխանների տարբերակների 12% դեպքում): Երիտասարդները նաև կարևորել են ջրամատակարարման ոչ պատշաճ կազմակերպման, համայնքում տեղեկատվության տարածման դժվարության, լուսավորության բացակայության, սոցիալ-մշակութային կյանքի պասիվության և համայնքային այլ հիմնախնդիրներ (Գրաֆիկ 6): Այլ հիմնախնդիրների ցանկում երիտասարդները նշել են առողջապահության ոլորտում մասնագետների բացակայության, տուրիզմի թերզարգացվածության և կանանց ոչ բավարար մասնակցության հիմնախնդիրները:

Ինչ վերաբերում է համայնքի հետագա զարգացման հեռանկարներին, ապա համաձայն ֆոկուս խմբային քննարկումների արդյունքների՝ երիտասարդները համարում են, որ համայնքն ընդհանուր առմամբ գնում է զարգացման ուղղությամբ, սակայն դանդաղ տեմպերով և արդյունքները դեռևս տեսանելի և շոշափելի չեն բնակիչների համար: Այն դեպքում, երբ նշվել է, որ համայնքը հիմնականում զարգանում է, որպես կոնկրետ օրինակներ երիտասարդները նշել են, որ համայնքում «շատացել են միջոցառումները», «սկսել է իրականացվել աղբահանություն», «իրականացվել է այգու բարեկարգում» և «սկսել են վերակառուցվել ճանապարհները»[3]: Մյուս կողմից երիտասարդները նշում են, որ զարգացումը հիմնականում տեղի է ունենում Ճամբարակ քաղաքում, որտեղ համեմատաբար ավելի ակտիվ է երիտասարդական կյանքը, իսկ հարակից գյուղական բնակավայրերում զարգացման տեմպերն առավել դանդաղ են: Որոշ երիտասարդներ նշել են, որ համայնքում փոփոխություններ և զարգացումներ տեղի չեն ունենում և նույնիսկ առկա է հետընթաց, որը հիմնականում կապում են գյուղատնտեսական հողերի չմշակման հետ:

[3] Մեջբերումները երիտասարդների հետ ֆոկուս խմբային քննարկումներից

2.2 ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ճամբարակ համայնքի երիտասարդների կարիքները և առաջնահերթությունները փորձ է կատարվել դուրս բերել երիտասարդների հետ քանակական դեմ առ դեմ հարցումների, ֆոկուս խմբային քննարկումների և առանցքային տեղեկատուների հետ խորին հարցազրույցների միջոցով:

Հարցին, թե որոնք են ձեր անձի առջև ծառացած ամենակարևոր խնդիրները, ըստ քանակական դեմ առ դեմ հարցումների արդյունքների երիտասարդների պատասխանների 51%-ի դեպքում նշվել է **աշխատանքի և զբաղվածության հնարավորությունների բացակայությունը**: 13% դեպքերում երիտասարդները նշել են ֆինանսական դժվարությունները կամ աշխատանքի դիմաց ցածր վարձատրությունը: Երիտասարդների կողմից առավել կարևորված մյուս խնդիրները վերաբերում են սոցիալական վատ պայմաններին, առողջական խնդիրներին, սոցիալ-մշակութային պասիվ կյանքին և բարձրագույն կրթություն ստանալու դժվարություններին (Գրաֆիկ 7):

Գրաֆիկ 7. Անձի առջև ծառացած խնդիրներն ըստ Ճամբարակ համայնքի երիտասարդների կողմից տրված պատասխանների բաշխման





Գրաֆիկ 8. Ընտանիքի առջև ծառացած խնդիրներն ըստ Ճամբարակ համայնքի երիտասարդների կողմից տրված պատասխանների բաշխման

Ինչ վերաբերում է ընտանիքի առջև ծառացած դժվարություններին, ապա հարցման ենթարկված երիտասարդների կողմից տրված պատասխանների 35%-ի դեպքում նշվել է ֆինանսական դժվարությունները: 19% պատասխանների դեպքում նշվել է, որ ընտանիքի անդամներից մեկը/մի քանիսը գործազուրկ են և չեն կարողանում աշխատանք գտնել: 11% պատասխանների դեպքում նշվել է, որ ընտանիքում խնդիրներ առկա չեն, իսկ բնակարանային վատ պայմանների մասին նշվել է տրված պատասխանների 7%-ի դեպքում, միևնույն ժամանակ 4%-ի դեպքում նշվել է կացարանի բացակայությունը որպես հիմնախնդիր (Գրաֆիկ 8):

Ընդհանրացնելով անձի և ընտանիքի առջև ծառացած հիմնախնդիրների վերաբերյալ երիտասարդների կողմից տրված պատասխանները՝ այս հիմնախնդիրները կարող ենք ներկայացնել երեք հիմնական ուղղություններով՝ 1. **Աշխատանքի բացակայություն**, աշխատանքի դիմաց ցածր վարձատրություն և ֆինանսական դժվարություններ, որոնք փոխկապված հիմնախնդիրներ են 2. **Սոցիալ-կենցաղային վատ պայմաններ**, որտեղ ներառված են նաև բնակարանային վատ պայմանները կամ բնակարանի բացակայությունը 3. **Անձի զարգացման և ինքնադրսևորման սահմանափակ հնարավորություններ**, որտեղ ներառված են բարձրագույն կրթություն ստանալու հնարավորության բացակայությունը, համայնքում սոցիալ-մշակութային պասիվ կյանքը և այլն:

«Մարզում բնակվող երիտասարդների հիմնական խնդիրները վերաբերում են զբաղվածությանը, համապատասխան կրթություն ունեցող մասնագետների աշխատանքի տեղավորմանը, մշակութային, մարզական կյանքի կազմակերպմանը: Այսօր չնայած մարզում ունենք մշակութային օջախներ, սակայն դեռևս այդ օջախները լիարժեք չեն բավարարում երիտասարդության պահանջները: Ունենք մարզում մարզադպրոցներ, որոնք մանկապատանեկան են, երիտասարդները հիմնականում պարապմունքներից հետո օգտվում են դրանցից, սակայն դեռևս դա քիչ է, չի բավարարում: Հիմնախնդիրներից է նաև ժամանցի վայրերի բացակայությունը, երիտասարդների համար ժամանցի կազմակերպումը»

Գեղարքունիքի մարզպետարանի ներկայացուցիչ, հատված խորին հարցազրույցից

«Գյուղի երիտասարդների համար զբաղվածություն չկա, միայն դպրոցում ունենք սպորտդահլիճ ու վերջ, զբաղվածության այլ հնարավորություն գյուղում չկա: Մշակույթի տուն չունենք: Գյուղի երիտասարդները ինչո՞վ պետք է զբաղվեն, կինո չկա, համերգ չկա, թատրոն չկա: Անգործության են մատնված երիտասարդները: Մշակույթի տուն ունենք, բայց չի գործում արդեն երկար տարիներ: Իսկ կրթության տեսանկյունից դպրոցը ավարտում են, դիմում են բարձրագույն կրթական հաստատություններ, ով հնարավորություն ունի սովորում է, իսկ ով չունի սկսում է գյուղատնտեսությամբ զբաղվել»

Ճամբարակ համայնքի գյուղական բնակավայրի վարչական ղեկավար, հատված խորին հարցազրույցից

Համայնքի երիտասարդների կարիքների գնահատում իրանացվել է նաև «Վորլդ Վիժն Հայաստանի» Ճամբարակի տարածքային գրասենյակի կողմից տարբեր ծրագրերի շրջանակներում, համաձայն որոնց երիտասարդների առավել կարևոր հիմնախնդիրները համայնքում գործազրկությունն է և ժամանցի վայրերի բացակայությունը: Առանցքային տեղեկատուների հետ իրականացված խորին հարցազրույցների արդյունքներով նույնպես վերահաստատվել են այս երկու հիմնական ուղղությունները: Առանցքային տեղեկատուները կարևորել են նաև միջին մասնագիտական և բարձրագույն կրթական հաստատությունների բացակայությունը համայնքում, ինչը լրացուցիչ դժվարություններ է ստեղծում կրթություն ստանալ ցանկացող երիտասարդների համար: Երիտասարդները չեն տիրապետում այն հմտություններին, որոնք կարող են ծառայեցնել ի շահ իրենց և համայնքի զարգացման, ինչպես օրինակ տուրիզմի զարգացման նախաձեռնություններն են, տարբեր հասարակական կազմակերպությունների հետ աշխատելու հմտությունները, ինչը մասնամբ նաև պայմանավորված է այսպիսի հնարավորությունների վերաբերյալ երիտասարդների շրջանում տեղեկատվության պակասով: Կարևորվել է նաև երիտասարդների սպորտային, մշակութային կյանքի կազմակերպման և փորձի փոխանակման և ժամանցի անցկացման հնարավորությունների բացակայությունը որպես հիմնախնդիր:

Ինչ վերաբերում է համայնքից երիտասարդների արտագաղթի տեմպերին, ապա համաձայն խորին հարցազրույցների արտագաղթի միտումներ առկա են համայնքից, սակայն ներակումս այդ տեմպերը նվազում են: Այս փուլում երիտասարդներն առավել շատ մեկնում են մայրաքաղաք Երևան աշխատելու համար և այնտեղ հաստատում են մշտական բնակություն: Երիտասարդների շրջանում առկա է նաև արտագնա սեզոնային աշխատանքի մեկնելու միտումներ:

Ֆոկուս խմբային քննարկումների արդյունքներով պարզ է դարձել, որ համայնքային որոշակի հիմնախնդիրներն ուղղակի կապված են երիտասարդների առօրյա կյանքի կազմակերպման հետ: Մի շարք բնակավայրերում բարձրացվել է մանկապարտեզի կամ նախակրթարանի բացակայության հիմնախնդիրը որպես համայնքային մակարդակի հիմնախնդիր, սակայն այն ուղղակի կապված է ընտանիք և երեխաներ ունեցող երիտասարդների առօրյա կյանքի և զբաղվածության կազմակերպման հիմնախնդրի հետ, հատկապես կանանց դեպքում, ովքեր առավել հաճախ են ստիպված զբաղվել երեխաների խնամքով, հետևաբար ունեն զբաղվածության առավել սահմանափակ հնարավորություններ: Մանկապարտեզի կամ նախակրթարանի բացակայության հիմնախնդիրը շեշտադրվել է Անտառամեջ, Ձորավանք, Այգուտ բնակավայրերում, որտեղ երիտասարդ ծնողները նշել են, որ համայնքներում առկա չէ մանկապարտեզ կամ նախակրթարան, իսկ հարևան բնակավայրերում գործող այսպիսի կառույցները մատչելի չեն տրանսպորտային կապի խնդրի պատճառով:

Ֆոկուս խմբային քննարկումների ընթացքում բարձրաձայնված համայնքային մյուս հիմնախնդիրը, որն առնչվում է երիտասարդներին վերաբերում է միջին մասնագիտական և բարձրագույն կրթական հաստատությունների բացակայությունը, ինչի պատճառով կրթությունը շարունակելու նպատակ ունեցող երիտասարդները ստիպված են այն իրականացնել համայնքից դուրս: Սա ենթադրում է լրացուցիչ ֆինանսական միջոցների առկայություն, ինչն արդեն իսկ խնդիր է երիտասարդների համար: Հնարավորությունների բացակայության պատճառով ակտիվ երիտասարդների մի մասը գործունեություն է ծավալում կամ շարունակում է բնակվել համայնքից դուրս, ինչի պատճառով ընդհանուր առմամբ նվազում է համայնքային երիտասարդական ներուժը:

«Առաջնային խնդիրն այն է, որ ոչ մեկս ինքնավստահ չենք: Մեր համայնքն իրականում զարգանում է, բայց համայնքի ոչ բոլոր երիտասարդներն են ներգրավված այս ամեն ինչի մեջ ու ոչ բոլորն են աշխատում համայնքի զարգացման ուղղությամբ»

Իգական սեռի երիտասարդ, հատված ֆոկուս խմբային քննարկումից

«Երևի թե ամենաառաջին հիմնախնդիրը երիտասարդների պարապությունն է, դասերից հետո կամ ընդհանուր ամառային արձակուրդների ժամանակ չկա զբաղմունք, կարելի էր ստեղծել օրինակ ծրագրեր, ճամբարներ կամ հետաքրքիր ինչ-որ սեմինարներ, որոնք ավելի հետաքրքիր կդարձնեին երիտասարդների առօրյա կյանքը»:

Արական սեռի երիտասարդ, հատված ֆոկուս խմբային քննարկումից

Երիտասարդների հետ խմբային քննարկումների ընթացքում բարձրաձայնված մյուս հիմնախնդիրը վերաբերում է համայնքում ժամանցի և մշակութային վայրերի բացակայությանը: Երիտասարդները կարևորել են այսպիսի վայրերի առկայությունը ոչ միայն իրենց առօրյայի հետաքրքիր և բազմազան կազմակերպերման տեսանկյունից, այլև այսպիսի տարածքներում իրենց հասակակիցների հետ հաղորդակցվելու, շփվելու հնարավորության տեսանկյունից: Համաձայն երիտասարդների՝ այսպիսի վայրերի առկայությունը կարող է խթան հանդիսանալ, որպեսզի երիտասարդները հանդես գան համատեղ նախաձեռնություններով և ձեռք բերեն ինքնավստահություն:



Գրաֆիկ 10. Երիտասարդների ընկալումներն առաջիկա 5 տարվա կտրվածքով իրենց կյանքի որակի փոփոխության վերաբերյալ

Ինչ վերաբերում է ապագայի նկատմամբ երիտասարդների պատկերացումներին, ապա հարցմանը մասնակցած երիտասարդների 33%-ը համարում է, որ առաջիկա 5 տարիների ընթացքում իրենց անձնական և ընտանեկան կյանքը էականորեն կբարելավվի, 52%-ը համարում է, որ կյանքը կբարելավվի որոշ չափով: Միևնույն ժամանակ հարցման ենթարկված երիտասարդների 13%-ը համարում է, որ իրենց և իրենց ընտանիքի կյանքում որևէ փոփոխություն տեղի չի ունենա, իսկ ահա 3%-ը համարում է, որ փոփոխությունները կլինեն բացասական (Գրաֆիկ 10): Բացասական փոփոխությունները երիտասարդները կապում են աշխատանք չգտնելու, ծախսերի ավելացման, երկիրը լքելու հեռանկարի հետ: Դրական փոփոխությունների հիմքում երիտասարդները տեսնում աշխատանք գտնելու, հեղափոխության արդյունքների, կրթության ձեռքբերման և այլն հեռանկարներ (Գրաֆիկ 9):



Գրաֆիկ 9. Առաջիկա 5 տարիների ընթացքում դրական փոփոխությունների ակնկալիքների հիմքերը

ԲԱԺԻՆ 3: ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿՅԱՆՔՈՒՄ

3.1 ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՏԻՄ-ԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿՅԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Տեղական ինքնակառավարման ոլորտում և համայնքային կյանքում երիտասարդների ներգրավվածության գնահատման առաջին բաղադրիչը վերաբերում է երիտասարդների իրազեկվածությանը այս ոլորտների վերաբերյալ: Երիտասարդների իրազեկվածության վերաբերյալ գնահատականները փորձ է կատարվել ստանալ երիտասարդների հետ քանակական դեմ առ դեմ հարցումների, ֆոկուս խմբային քննարկումների և առանցքային տեղեկատուների հետ խորին հարցազրույցների միջոցով:

Համաձայն երիտասարդների շրջանում իրականացված քանակական դեմ առ դեմ հարցումների արդյունքների՝ համայնքում տեղի ունեցող նորությունների, իրադարձությունների մասին որպես տեղեկատվության հիմնական աղբյուր երիտասարդների կողմից տրված պատասխանների 41%-ում նշվել է «ծանոթներ, բարեկամներ» տարբերակը: Ֆոկուս խմբային քննարկումների ընթացքում նույնպես հատկապես փոքր բնակավայրերում բնակվող երիտասարդները հիմնականում ներկայացրել են, որ համայնքային իրադարձությունների վերաբերյալ տեղեկատվություն են ստանում համայնքի մյուս բնակիչներից: Հաջորդիվ, քանակական դեմ առ դեմ հարցմանը մասնակցած երիտասարդների պատասխանների 28%-ի դեպքում որպես տեղեկատվության աղբյուր նշվել է սոցիալական ցանցերում տեղադրվող տեղեկատվությունը, իսկ 9% դեպքերում՝ համայնքային կառույցներում փակցվող հայտարարությունները: Հնչած տարբերակների թվում համապատասխանաբար 8% և 7% են կազմել «համայնքային կայքից» և «ՏԻՄ-երից/ներկայացուցիչներից» տարբերակները (Գրաֆիկ 11):



Գրաֆիկ 11. Համայնքային իրադարձությունների վերաբերյալ երիտասարդների տեղեկատվության աղբյուրները

Հաջորդիվ, քանակական դեմ առ դեմ հարցումների միջոցով փորձ է կատարվել գնահատել, թե որքանով են երիտասարդները ծանոթ ՏԻՄ ներկայացուցիչներին և որքանով են իրազեկված համայնքում տեղի ունեցող միջոցառումների, ծրագրերի վերաբերյալ: Համապատասխանաբար, հարցմանը մասնակցած երիտասարդների 93%-ը նշել է, որ ճանաչում է Ճամբարակ խոշորացված համայնքի ղեկավարին, իսկ 7%-ը՝ չի ճանաչում: Երիտասարդների միայն 6%-ն է ճանաչում համայնքի ավագանու բոլոր անդամներին: 11%-ը ճանաչում է հիմնական մասին, իսկ 15%-ը՝ մի քանիսին միայն: Երիտասարդների 38%-ը ճանաչում է մեկ կամ երկու ավագանու անդամի, իսկ ահա երիտասարդների 30%-ը նշել է, որ ավագանու անդամներից ոչ մեկին չի ճանաչում (Գրաֆիկ 12):



Գրաֆիկ 12. Երիտասարդների իրազեկվածությունը ավագանու կազմին

Հարցին, թե արդյոք կարող եք հիշել համայնքապետարանի կողմից վերջին վեց ամիսների ընթացքում իրականացված/իրականացման ընթացքում գտնվող ծրագրեր ձեր բնակավայրում և խորոշացված համայնքում, ընդհանուր առմամբ առնվազն մեկ ծրագիր կամ միջոցառում կարողացել են նշել հարցման ենթարկված երիտասարդների 70%-ը: 12%-ը նշել է, որ վերջին վեց ամիսների ընթացքում ոչ մի ծրագիր չի իրականացվել համայնքում, իսկ 18%-ը որևէ ծրագիր հիշել չի կարողացել: Այն երիտասարդները, ովքեր կարողացել են նշել համայնքում իրականացվող որևէ ծրագիր կամ միջոցառում, առավել հաճախ հիշատակել են ճանապարհների բարեկարգման, աղբահանության կազմակերպման, լուսավորության իրականացման, այգու բարեկարգման և կազմակերպված ամանորյա միջոցառումները որպես իրականացված/իրականացման փուլում գտնվող ծրագրերի կոնկրետ օրինակներ: Ինչ վերաբերում է վերջին վեց ամիսների ընթացքում համայնքապետարանի կողմից համայնքի երիտասարդներին ուղղված ծրագրերի իրականացմանը, առնվազն գոնե մեկ երիտասարդական ծրագիր կարողացել է հիշատակել հարցման ենթարկված երիտասարդների միայն 35%-ը: 20%-ը նշել է, որ որևէ նման միջոցառում չի իրականացվել համայնքում, իսկ ահա 45%-ը դժվարացել է նշել վերջին վեց ամիսների ընթացքում իրականացված որևէ երիտասարդական ծրագիր: Որպես երիտասարդական ծրագրի կոնկրետ օրինակ շուրջ 60% դեպքերում երիտասարդները նշել են ամանորյա միջոցառումները և «Ձյունե հեքիաթ» փառատոնը:

Վերջին վեց ամիսների ընթացքում հասարակական կազմակերպությունների, միջազգային դոնորների կողմից իրականացված ծրագրեր, որոնք ուղղված են եղել համայնքի երիտասարդներին, կարողացել են հիշատակել հարցման ենթարկված երիտասարդների 28%-ը: 20%-ը նշել է, որ նմանատիպ ծրագրեր չեն իրականացվել, իսկ 52%-ը որևէ ծրագիր մտաբերել չի կարողացել:



Գրաֆիկ 13. Համայնքի կառավարմանը վերաբերող տարբեր հարցերի վերաբերյալ երիտասարդների իրազեկվածությունը

Ընդհանուր առմամբ համայնքի կառավարմանը վերաբերող տարբեր հարցերի վերաբերյալ ավելի շուտ իրազեկված կամ լիովին իրազեկված են եղել հարցմանը մասնակցած երիտասարդների շուրջ 30%-ը: Համեմատաբար առավել մեծ թվով երիտասարդներ են իրազեկված իրենց բնակավայրում և բազմաբնակավայր համայնքում համայնքապետարանի կողմից իրականացվող ծրագրերի և համայնքային զարգացման հնգամյա ծրագրի մասին: Առավել քիչ թվով երիտասարդներ են իրազեկված համայնքային բյուջեի չափի, համայնքի խոշորացման գործընթացի և համայնքապետարանի կողմից տեղական հարկերի, տուրքերի և վճարների դրույքաչափերի սահմանման և ստացված եկամուտների ծախսման ուղղությունների վերաբերյալ (Գրաֆիկ 13):

Երիտասարդների շրջանում համայնքային իրադարձությունների, անձնային և մասնագիտական զարգացման հնարավորությունների, տեղական ինքնակառավարման մարմինների վերաբերյալ իրազեկվածության պակասի խնդիրը կարևորել են ինչպես ֆոկուս խմբային քննարկումներին մասնակցող երիտասարդները, այնպես էլ առանցքային տեղեկատուները: Համաձայն ֆոկուս խմբային քննարկումների՝ բազմաբնակավայր համայնքի կենտրոնից հատկապես առավել հեռու տեղակայված բնակավայրերում կարևոր հիմնախնդիր է տեղեկատվության տարածումը ինչպես բնակավայրի ներսում, այնպես էլ համայնքի կենտրոնից տեղեկատվության ստացումը: Ինչպես նշում են երիտասարդները շատ հաճախ «լինում է այնպես, որ որևէ իրադարձություն, միջոցառում վերջանում է և մենք նոր տեղյակ ենք լինում, որ նման բան է եղել» և այսպիսի իրադարձությունների մասին տեղյակ են լինում հիմնականում «նրանք ովքեր ծանոթ ունեն, իսկ մնացածը գաղափար անգամ չունեն, թե ինչ է կատարվում»[4]:

Համայնքի գյուղական բնակավայրերում որպես տեղեկատվության ստացման հիմնական աղբյուր երիտասարդները նշել են համայնքի մյուս բնակիչներին, ծանոթներին, բարեկամներին: Ի տարբերություն հարակից գյուղական բնակավայրերի Ճամբարակ քաղաքում երիտասարդներն առավել շատ են նշել, որ ՏԻՄ և համայնքային կյանքի վերաբերյալ նորություններին տեղեկանում են հենց համայնքապետարանից: Իսկ որպես տեղեկատվության տարածման արդյունավետ մեթոդներ երիտասարդները նշել են համացանցը, մասնավորապես սոցիալական ցանցերը և հայտարարությունների միջոցով ծանուցումը:

[4] Մեջբերումները երիտասարդների հետ ֆոկուս խմբային քննարկումներից

«Նախաձեռնությունը պետք է մարդու մեջ լինի, ուղղակի տեղեկատվության պակաս կա համայնքում, մարդիկ տեղյակ չեն լինում, երբ ինչ-որ բան է տեղի ունենում, կարող է մի քանի հոգի տեղյակ լինեն ու վերջ»:

Արական սեռի երիտասարդ, հատված ֆոկուս խմբային քննարկումից

«Ոչ մի տեղեկատու չկա, մեր գյուղում՝ ինչ են անում, մենք ոչ մի բան չենք իմանում: Ֆեյսբուքյան էջ մենակ Ճամբարակինը կա, որ տեղյակ լինում ենք ինչ է լինում, բայց գյուղերինը չկա, մենակ Ճամբարակի մասին է ֆեյսբուքում, ուրիշ ոչ մի բան չկա»:

Իգական սեռի երիտասարդ, հատված ֆոկուս խմբային քննարկումից

«Ես տեղյակ չեմ ավագանիների կողմից կայացվող որոշումներին, բայց գիտեմ որ Ճամբարակի համայնքապետարանն ունի իր կայքը և այնտեղ ամեն ինչ տեղադրված է լինում: Եթե ինչ-որ մեկին հետաքրքրում է կարող է մտնել և նայել»:

Իգական սեռի երիտասարդ, հատված ֆոկուս խմբային քննարկումից

Համաձայն մարզպետարանի և համայնքապետարանի ներկայացուցիչների՝ մարզային և համայնքային հարցերի վերաբերյալ համայնքի երիտասարդների հիմնական իրազեկումն իրականացվում է պաշտոնական կայքերի և սոցիալական ցանցերում պաշտոնական էջերի միջոցով: Մարզպետարանի և համայնքապետարանի կայք էջերում պարբերաբար ներկայացվում են մարզի և համայնքի վերաբերյալ հայտարարություններ, նորություններ և մամլո հաղորդագրություններ:

«Համայնքի երիտասարդները չգիտեմ որքանով են իրազեկված, բայց ՏԻՄ գործունեությունը թափանցիկ է, ամբողջը, ինչ կատարվում է Ճամբարակի համայնքապետարանում տեղադրվում է և՛ Ճամբարակի կայքում, և՛ ֆեյսբուքում, ուստի կարծում եմ արդեն երիտասարդներից է կախված իրենք տեղյակ կլինեն, թե՝ ոչ: Իրազեկումը ոչ միայն սոցիալական կայքերում է լինում, ամեն ինչը բաց թափանցիկ է ու համայնքի երիտասարդները ցանկացած պահի կարող են գալ և մասնակցել ավագանու նիստերին, մնում է միայն ցանկություն և մոտիվացիա»

Ճամբարակի համայնքապետարանի ներկայացուցիչ, հատված խորին հարցազրույցից

«Այսօր բոլոր ՏԻՄ-երն իրենց էլեկտրոնային կայքերում տեղադրում են և՛ իրենց բյուջեների մասին, և՛ կատարողականների մասին, և՛ միջոցառումների մասին և այլ համայնքային խնդիրների մասին տեղեկատվություն: Իմ կարծիքով այդ էլեկտրոնային կայքերը հնարավորություն են տալիս երիտասարդներին ավելի մոտիկից ծանոթանալու համայնքի խնդիրներին և լուծումներին»

Գեղարքունիքի մարզպետարանի ներկայացուցիչ, հատված խորին հարցազրույցից

3.2 ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԿՅԱՆՔԻՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

Համաձայն Ճամբարակ համայնքի երիտասարդների հետ քանակական դեմ առ դեմ հարցումների արդյունքների՝ համայնքի երիտասարդների միայն 10%-ն է ակտիվ հետևում համայնքում տեղի ունեցող սոցիալ-մշակութային և համայնքային կյանքին, իսկ 29%-ը նշել է, որ «ավելի շուտ ակտիվ» է այս հարցում: Հարցմանը մասնակցած երիտասարդների 27%-ը նշել է, որ «ավելի շուտ ակտիվ չէ», իսկ 30%-ը՝ «ընդհանրապես ակտիվ չէ»: Հարցմանը մասնակցած երիտասարդների 4%-ը դժվարացել է պատասխանել այս հարցին (Գրաֆիկ 14):



Գրաֆիկ 14. Սոցիալ-մշակութային և համայնքային կյանքին հետևելու ակտիվությունն ըստ երիտասարդների կողմից տրված պատասխանների

Սոցիալ-մշակութային և համայնքային կյանքին հետևելու ակտիվության ցուցանիշների՝ ըստ հարցմանը մասնակցած երիտասարդների սեռային պատկանելիության տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ «լիովին ակտիվ եմ» տարբերակն առավել հաճախ նշվել է արական սեռի երիտասարդների կողմից, մինչդեռ իգական սեռի երիտասարդներն առավել հաճախ նշել են կա՛մ «ավելի շուտ ակտիվ չեմ», կա՛մ «ավելի շուտ ակտիվ եմ» տարբերակները (Գրաֆիկ 15):



Գրաֆիկ 15. Սոցիալ-մշակութային և համայնքային կյանքին հետևելու ակտիվությունն ըստ երիտասարդների կողմից տրված պատասխանների





Գրաֆիկ 16. ՏԻՄ-երի և համայնքային կյանքում երիտասարդների ակտիվության ինքնագնահատումը

«Ընդհանուր առմամբ ինչպես կգնահատեք ՏԻՄ-երի և համայնքային կյանքում Ձեր մասնակցությունը և ակտիվությունը» հարցին հարցման ենթարկված երիտասարդների 42%-ը նշել է, որ «ավելի շուտ ակտիվ չէ», իսկ 32%-ը՝ «ընդհանրապես ակտիվ չէ»: Հարցման ենթարկված երիտասարդների 24%-ն իրենց ակտիվությունը գնահատել է միջինից բարձր, իսկ «լիովին ակտիվ եմ» պատասխանը տրվել է միայն հարցման ենթարկված երիտասարդների 2%-ի կողմից (Գրաֆիկ 16):

Վերջին 6 ամիսների ընթացքում Ճամբարակ բազմաբնակավայր համայնքի ղեկավարին անձնական հարցով դիմել է հարցման ենթարկված երիտասարդների 7%-ը, համայնքային որևէ հարցով՝ 5%-ը: Առավել մեծ թվով երիտասարդներ են դիմել իրենց բնակավայրերի վարչական ղեկավարներին[5] անձնական հարցով (11%) և առավել քիչ երիտասարդներ համայնքային հարցերով (3%): Ընդհանուր առմամբ առավել քիչ թվով երիտասարդներ են անձնական կամ համայնքային հարցերով դիմել համայնքի ավագանու անդամներին (95%-ը չեն դիմել որևէ հարցով) կամ տեղական իշխանության այլ ներկայացուցչի (94%-ը չեն դիմել որևէ հարցով): Իսկ տեղական հասարակական որևէ կազմակերպության անձնական կամ համայնքային հարցով դիմել են հարցման ենթարկված երիտասարդների համապատասխանաբար 6%-ը և 3%-ը:

[5] Տվյալները չեն ներառում Ճամբարակ քաղաքի երիտասարդների կողմից տրված պատասխանները

Վերջին մեկ տարվա ընթացքում երիտասարդական հասարակական կազմակերպության անդամ են դարձել հարցման ենթարկված երիտասարդների 9%-ը: Իրենց կամ իրենց համայնքի այլ բնակիչների շահերը ներկայացնելու նպատակով սոցիալական ցանցերում նախաձեռնող խումբ են ստեղծել կամ միացել են նմանատիպ խմբի հարցման ենթարկված երիտասարդների 10%-ը: Տեղական և պետական իշխանության մարմիններին դիմում են ներկայացրել համապատասխանաբար հարցման ենթարկված երիտասարդների 8%-ը և 6%-ը, իսկ ՏԻՄ կից խորհրդակցական մարմիններում են ընդգրկվել 7%-ը: Հարցման ենթարկված երիտասարդների 8%-ը կազմակերպել է ակցիաներ, հանրահավաքներ կամ ստորագրահավաքներ իր կամ իր համայնքի այլ բնակիչների շահերի ներկայացման նպատակով: Վերոնշյալ բոլոր նախաձեռնությունների համեմատ առավել մեծ թվով երիտասարդներ են մասնակցել հանրային քննարկումների՝ երիտասարդների 14%-ը (Գրաֆիկ 17):



Գրաֆիկ 17. Երիտասարդների մասնակցությունը համայնքային և քաղաքացիական նախաձեռնություններին



Գրաֆիկ 18. Համայնքում տեղի ունեցող միջոցառումներին երիտասարդների մասնակցությունը

Հարցման ենթարկված երիտասարդների միայն 5%-ն է նշել, որ մասնակցում է ավագանու նիստերին, որոնց թվում գրեթե միշտ մասնակցում է երիտասարդների միայն 1%-ը: Հարցման ենթարկված երիտասարդների 96%-ը երբևէ չի մասնակցել համայնքի բյուջեի վերաբերյալ հանրային լսումների, իսկ 92%-ը՝ համայնքի քաղաքականությունների, ծրագրերի և պլանների քննարկումներին: Համեմատաբար առավել մեծ թվով երիտասարդներ են մասնակցել հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող քննարկումներին, սեմինարներին և այլ միջոցառումներին, բողոքի ցույցի կամ երթի կամ համայնքային խնդիրների վերաբերյալ ստորագրահավաքի: Ինչ վերաբերում է համայնքային ծառայությունների մատուցման վերահսկողությանը, ապա երիտասարդների 8%-ը նշել է, որ այսպիսի գործողություններ տեղի չեն ունեցել, 91%-ը՝ երբեք չի մասնակցել հանրային վերահսկողության և միայն 1%-ն է նշել, որ հանրային ծառայությունների մատուցման վերահսկողության գործողություններում մասնակցում է հազվադեպ (Գրաֆիկ 18):



Գրաֆիկ 19. Երիտասարդների անդամակցությունը նախաձեռնող խմբերին կամ միություններին

Հարցման ենթարկված երիտասարդների 3%-ը քաղաքական կուսակցության կամ դրա տեղական մասնաճյուղի պասիվ անդամ է, իսկ 1%-ը՝ ակտիվ: Հասարակական կազմակերպության անդամ են հարցման ենթարկված երիտասարդների 5%-ը: Երիտասարդների շուրջ 10%-ը որևէ բիզնես գաղափարի շուրջ հավաքված խմբի անդամ են հանդիսանում, իսկ 5%-ը՝ քաղաքացիական ակտիվիստների խմբի անդամ են: Երիտասարդների 7%-ը երբևէ եղել են արվեստի, մշակույթի կամ սպորտի հետ առնչվող խմբակի անդամ, իսկ հարցման իրականացման պահին այսպիսի խմբակի անդամ են հանդիսացել 8%-ը (Գրաֆիկ 19):

Ֆոկուս խմբային քննարկումների ժամանակ յուրաքանչյուր առանձին բնակավայրում մասնակից երիտասարդները հիմնականում կարողացել են նշել մեկ կամ երկու համայնքային իրադարձություն, որոնք տեղի են ունեցել վերջին մեկ տարվա ընթացքում և որոնց իրենք ունեցել են որոշակի մասնակցություն: Ինչ վերաբերում է տեղական ինքնակառավարմանը մասնակցությանը, ապա երիտասարդները նշել են, որ հիմնականում չեն մասնակցում այնպիսի միջոցառումների, ինչպես օրինակ հանրային քննարկումներն են, ավագանու նիստերը և այլն: Համաձայն ֆոկուս խմբային քննարկումների, ավագու նիստերին երիտասարդների մասնակցության սահմանափակումները կապված են մի կողմից այդ նիստերի «փակ» լինելու, մյուս կողմից երիտասարդների կողմից շարժառիթի և հետաքրքրվածության բացակայության հետ: Մյուս կողմից այն երիտասարդները, ովքեր առցանց հետևել են ավագանու նիստերին, նշել են, որ այնտեղ չեն ծավալվում քննարկումներ և բանավեճեր, ինչի պատճառով այդպիսի նիստերը հետաքրքիր չեն իրենց համար:

Ի տարբերություն երիտասարդների՝ մարզպետարանի և համայնքապետարանների ներկայացուցիչները հիմնականում ներկայացնում են, որ երիտասարդների համար ստեղծված են մասնակցության հնարավորություններ, սակայն նրանք չեն փորձում խնդրականացնել մասնակցության նկատմամբ հետաքրքրվածության բացակայության հանգամանքը: Հիմնական կանխադրույթն այն է, որ եթե «երիտասարդը հետաքրքրված չէ ոչինչ չես կարող անել» կամ «նիստերը բաց են և եթե երիտասարդները ցանկանում են կարող են մասնակցել»[6]: ՏԻՄ և հանրային կյանքում երիտասարդների մասնակցության ավելացման ուղղությամբ որևէ պրոակտիվ ծրագրի կամ գործողության մասին մարզպետարանի կամ համայնքապետարանի ներկայացուցիչները չեն ներկայացրել:

> *«Այն երիտասարդները, ովքեր մնում են համայնքում ու չեն մեկնում արտագնա աշխատանքի, հիմնականում ներգրավված են համայնքի առօրյա կյանքին: Կան ծրագրեր որում հիմնական իրականացնողները երիտասարդական կազմակերպություններ են, երիտասարդներն են: Մշակութային, մարզական բազմաթիվ միջոցառումներ են կազմակերպում, միջոցառումներ են անցկացվում: Ազգային, պետական տոների հետ կապված փառատոններ կազմակերպվում են»*
>
> Գեղարքունիքի մարզպետարանի ներկայացուցիչ, հատված խորին հարցազրույցից

> *«Երիտասարդների մասնակցությունը համայնքին վերաբերող հարցերի քննարկումներին և լսումներին շատ քիչ է, երևի միայն համայնքի զարգացման ծրագրի աշխատանքներին են ներկա եղել համայնքից մի քանի ակտիվ երիտասարդներ: Կարծում եմ, չի հետաքրքրում քաղաքապետարանի գործունեությունը երիտասարդներին»*
>
> Ճամբարակի համայնքապետարանի ներկայացուցիչ, հատված խորին հարցազրույցից

[6] Մեջբերումները առանցքային տեղեկատուների հետ խորին հարցազրույցներից

Ճամբարակ համայնքում 2012 թվականից սկսած ծրագրեր է իրականացնում «Վորլդ Վիժն Հայաստանի» Ճամբարակի տարածքային գրասենյակը՝ երեխաների պաշտպանության, տնտեսության զարգացման, կրթության որակի բարելավման, շահերի պաշտպանության, ակտիվ քաղաքացիության, երիտասարդների զարգացման և այլ ոլորտներում: Երիտասարդական զարգացման ծրագրերի շրջանակներում գրասենյակն իրականացնում է մի շարք ծրագրեր, որոնց թվում են ռոբոտաշինության 6 ինժեներական լաբորատորիաների հիմնումը Ճամբարակի դպրոցներում, սոցիալական ձեռներեցության դասընթացների իրականացումը, ամառային դպրոցների կազմակերպումը, երիտասարդների մասնագիտական կողմնորոշմանն ուղղված դասընթացները և այլն: Կազմակերպությունը որպես հասարակական կազմակերպություն իր նպատակներին ուղղված գործողություններն իրականացնում է համայնքապետարանի, մարզպետարանի կամ դպրոցների հետ համատեղ:

«Երիտասարդների հետ համատեղ իրականացվել է դպրոցներում Իմփաքթ ակումբները՝ Թթուջուր և Վահան գյուղերում: Իրականացվել են ՍՔԱՅ ակումբները, այն ունենցել ենք Մարտունու համայնքում և Ճամբարակում: Իսկ ապագայի համար ունենք արդեն հաստատված զարգացման ծրագիր: Տարվա ընթացքում մենք նախատեսել ենք և իրականացնում ենք սոցիալական ձեռներեցության, շահերի պաշտպանության և նմանատիպ այլ ծրագրեր: Երիտասարդներին հիմնական խոչընդոտողները հենց իրեք են, իրենք պետք է ունենան մոտիվացիա և ցանկություն դառնալու ակտիվ քաղաքացիներ»:

«Վորլդ Վիժն Հայաստանի» Ճամբարակի տարածքային գրասենյակի ներկայացուցիչ, հատված խորին հարցազրույցից

Հայկական Կարիտասի կողմից Գեղարքունիքի մարզում իրականացվում է «Արամազդ» ծրագիրը, որը համայնքային ծրագրի է և իրականացվում է դեռևս 2001թվականից: Այն ուղղված է սահմանամերձ համայնքների տնտեսական, սոցիալական զարգացման գործընթացների աջակցությանը և հիմվում է երիտասարդների ներգրավմամբ շահագրգիռ կողմերի հզորացման, բիզնես գործունեության քաջալերման և երիտասարդների համար համագործակցության հնարավորությունների ստեղծման վրա:

«Ճամբարակի տարածաշրջանում այս պահին մենք հավաքագրում ենք հասարակական, երիտասարդական կազմակերպություններ, որոնց հետ մինչև այդ աշխատել ենք: Ներկայումս փորձում ենք ներառել նաև նոր հասարակական կազմակերպություններ, որպեսզի ավելի մեծացնենք շրջանակը և հատկապես ուշադրություն ենք դարձնում երիտասարդական հասարակական կազմակերպություններին: Կարողացել ենք մոբիլիզացնել Ճամբարակի մի քանի գյուղական համայնքների երտասարդների, նրանց շրջանում զարգացրել ենք ծրագիր գրելու, համայնքային նախաձեռնություններով հանդես գալու հմտություններ, որից հետո իրենք իրենց իսկ ջանքերով կարողացել են համայնքային ակտիվ նախաձեռնություններ իրականացնել:

«Հայկական Կարիտաս» կազմակերպության ներկայացուցիչ, հատված խորին հարցազրույցից

«Շեն» հասարակական կազմակերպության կողմից համայնքում հիմնականում իրականացվում է համայնքային զարգացման ծրագրեր: Որպես երիտասարդական ծրագրեր իրականացվել է մեկ ուսումնական տարի տևողությամբ ձեռարվեստի դասընթացներ բոլոր գյուղերում, դպրոցների հետ աշխատանքը շրջանակներում վերապատրաստվել են օպերատորներ և ուսուցիչներ և այլն:

3.3 ՏԻՄ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՏԻՄ և հանրային կյանքում երիտասարդների ներգրավվածության գնահատման վերջին բաղադրիչը վերաբերում է այսպիսի ներգրավվածության նկատմամբ երիտասարդների դիրքորոշումներին: Այս դիրքորոշումների գնահատման համար երիտասարդներին քանակական դեմ առ դեմ հարցումների մեթոդի կիրառության ընթացքում ներկայացվել են դատողություններ, որից հետ երիտասարդները գնահատել են, թե որքանով են համաձայն այդ դատողությունների հետ:

«Մեր համայնքում առկա են բավարար հնարավորություններ՝ տեղական ինքնակառավարմանը մասնակցելու համար» դատողության հետ համաձայն են եղել հարցման ենթարկված երիտասարդների 44%-ը, ընդ որում 21%-ը եղել են «ավելի շուտ համաձայն», իսկ 23%-ը «լիովին համաձայն»: Երիտասարդների 34%-ը նշել է, որ «ընդհանրապես համաձայն չէ» այս դատողության հետ, իսկ 21%-ը՝ «ավելի շուտ համաձայն չէ» (Գրաֆիկ 20):

«ՏԻՄ ղեկավարները և համայնքապետարանի աշխատակիցները չեն խրախուսում երիտասարդների մասնակցությունը» դատողության հետ ընդհանրապես համաձայն չեն եղել երիտասարդների 54%-ը, 24%-ը՝ ավելի շուտ համաձայն չեն եղել: Այս դատողության հետ համաձայնել են հարցման ենթարկված երիտասարդների 22%-ը, այդ թվում 11%-ը լիովին համաձայն է դատողության հետ, իսկ մնացած 11%-ը՝ ավելի շուտ համաձայն է (Գրաֆիկ 21):



Գրաֆիկ 20. ՏԻՄ մասնակցության համար ստեղծված հնարավորությունների գնահատումը երիտասարդների կողմից



Գրաֆիկ 21. ՏԻՄ մասնակցության խրախուսումը երիտասարդների գնահատմամբ



Համաձայն ՏԻՄ և համայնքում կյանքում իրենց մասնակցության վերաբերյալ տարբեր դատողություններին տրված գնահատականների՝ որպես ՏԻՄ և համայնքային կյանքում չներգրավվելու հիմնական պատճառը երիտասարդները նշել են ժամանակի սղությունը: Երիտասարդները մասամբ համաձայն են նաև այն դատողության հետ, որ իրենք տեղյակ չեն թե ինչպես կարող են մասնակցել համայնքային կառավարման աշխատանքներին, ինչպես նաև, որ իրենք չեն սիրում ակտիվություն դրսևորել իրենց ընտանիքից և շրջապատից դուրս: Հարցման ենթարկված երիտասարդների շուրջ կեսը համարում է, որ իր մասնակցությունը ոչինչ չի փոխի: Երիտասարդները նաև համաձայն չեն այն դատողության հետ, որ իրենց հետաքրքիր չէ, թե ինչ է տեղի ունենում իրենց համայնքում և որ նրանք անտարբեր են համայնքային կյանքի նկատմամբ: Ինչ վերաբերում է ՏԻՄ մարմինների նկատմամբ վստահությանը, ապա երիտասարդների գերակշիռ մասը վստահում է ՏԻՄ մարմիններին (Գրաֆիկ 22):

Գրաֆիկ 22. ՏԻՄ և համայնքային կյանքում մասնակցության վերաբերյալ դատողությունների տրված գնահատականները երիտասարդների կողմից



Գրաֆիկ 24. Երիտասարդների ազդեցությունը համայնքի խնդիրների վերաբերյալ որոշումների կայացման վրա

Ինչ վերաբերում է կայացվող որոշումների վրա երիտասարդների ազդեցությանը, ապա հարցման ենթարկված երիտասարդների 8%-ը համարում է, որ համայնքի խնդիրների վերաբերյալ ավագանու և համայնքապետի որոշումների կայացման վրա համայնքի երիտասարդների ազդեցությունը ընդհանրապես զգալի չէ, 13%-ը՝ ավելի շուտ զգալի չէ: Երիտասարդների 47%-ը կարծում է, որ երիտասարդների ազդեցությունն այս հարցում ավելի շուտ զգալի է, իսկ ահա 21%-ը համարում է, որ ազդեցությունը լիովին զգալի է (Գրաֆիկ 24):

Հարցին, թե որքանով եք Դուք պատրաստ ժամանակ հատկացնել ՏԻՄ-երի և համայնքային աշխատանքներում մասնակցության համար, եթե ստեղծվեն Ձեր մասնակցության համար նպաստավոր պայմաններ, հարցման ենթարկված երիտասարդների 10%-ը նշել է, որ ընդհանրապես պատրաստ չէ, 19%-ը՝ «ավելի շուտ պատրաստ չէ»: Երիտասարդների 45%-ը նշել է, որ «ավելի շուտ պատրաստ է» ժամանակ հատկացնել ՏԻՄ-երում և համայնքային աշխատանքներում մասնակցության համար, իսկ 23%-ը՝ «լիովին պատրաստ է» (Գրաֆիկ 23):

Համաձայն ֆոկուս խմբային քննարկումների արդյունքների՝ համայնքում կազմակերպվող սպորտային, մշակութային միջոցառումներին երիտասարդներն առավել ակտիվ մասնակցություն են ցուցաբերում, ինչպես նաև մասնակցում են կամավորական աշխաանքներին: Միևնույն ժամանակ երիտասարդները նշել են, որ քաղաքական փոփոխություններից հետո սկսել են առավել շատ հետաքրքրվել համայնքային կառավարմամբ, քանի որ համարում են, որ ներկայումս իրենց ձայնն ավելի շատ է հաշվի առնվում. «նոր սկսել ենք հետաքրքրվել, կամաց զարգանում է, փորձում ենք մասնակցել»[7]:

Գրաֆիկ 23. Երիտասարդների պատրաստակամությունը ժամանակ հատկացնել ՏԻՄ-երում և համայնքային աշխատանքներում մասնակցության համար





ՏԻՄ-երի և համայնքային կյանքում երիտասարդության մասնակցությանը խոչընդոտող գործոնների շարքում երիտասարդներն առավել հաճախ նշել են իրազեկվածության պակասը (տրված պատասխանների 27%-ի դեպքում), այնուհետև հետաքրքրվածության պակասը կամ ցանկության բացակայությունը (տրված պատասխանների 17% դեպքերում), որից հետո ժամանակի սղությունը (տրված պատասխանների 10% դեպքերում): Որպես առավել հաճախ հնչած պատասխաններ երիտասարդները նշել են նաև երիտասարդների շրջանում անվստահությունն իրենց ուժերի նկատմամբ, կենցաղային հոգսերի առկայությունը, երիտասարդական ծրագրերի, միջոցառումների բացակայությունը, աշխատանքի բացակայության պատճառով երիտասարդների մոտիվացիայի պակասը:

Առանցքային տեղեկատուների հետ խորին հարցազրույցների արդյունքներով՝ երիտասարդների մասնակցությանը խոչընդոտող հիմնական գործոնը ընդհանուր առմամբ երիտասարդների պասիվությունն է, որը պայմանավորված է զբաղվածության և ժամանցային վայրերի բացակայությամբ, կենցաղային հոգսերի վրա կենտրոնացած լինելով: Միևնույն ժամանակ առանցքային տեղեկատուները նշում են, որ ներկայումս մասնակցության միտումները դրական են և ավելի շատ երիտասարդներ են փորձում լինել ակտիվ և նախաձեռնող:

«Ունենք շատ երիտասարդներ, որոնք ակտիվ են, շատ դրական եմ գնահատում, որ աղջիկների քանակն է շատ, իմ սկսած աշխատանքային տարիներին այդ գենդերային հավասարության հետ կապված աղջիկների ամաչկոտությունը, միջավայրում շփվելու անկարողությունը կամաց-կամաց դուրս է գալիս ու հիմա շատ երիտասարդներ, հիմնականում աղջիկներ կարողանում են և՛ իրենց խոսքը մինչը վերջ տանել, և՛ իրենց գաղափարները առաջարկել, այպես որ բավականին առաջխաղացում կա մեր երիտասարդության գործունեության մեջ»

Գեղարքունիքի մարզպետարանի ներկայացուցիչ, հատված խորին հարցազրույցից

«Հիմնական խոչընդոտող գործոն է այն, որ երիտասարդության պահանջմունքները հոգևոր և նյութական այդքան բավարարված չեն: Այսօր սոցիալական խնդիր կա, ընտանիք կազմելու համար երիտասարդները երկմտանքի առաջ են կանգնում հատկապես մարզային համայնքներում, որտեղ աշխատանքի խնդիր կա, հաղորդակցվելու խնդիր կա»

Գեղարքունիքի մարզպետարանի ներկայացուցիչ, հատված խորին հարցազրույցից

ԲԱԺԻՆ 4: ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՎ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ

4.1 ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ԵՎ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Ճամբարակ բազմաբնակավայր համայնքի 2018-2022թթ. համայնքային զարգացման հնգամյա ծրագիրում առկա է որոշակի հատվածական անդրադարձ երիտասարդական հիմնախնդիրներին: Մասնավորապես երիտասարդության աշխատանքային և ժամանցային վայրերի բացակայությունը ներկայացված է համայնքի «թույլ կողմերի» շարքում որպես հիմնախնդիր: ՀԶԾ-ում որպես համայնքի զարգացման խոչընդոտ և դժվարություն է նշվում ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը՝ երիտասարդության ներգրավմամբ, որը պայմանավորված է տարածքների, տեխնիկա-սարքավորումների բացակայությամբ, ծրագրերի պակասով, ֆինանսական ռեսուրսների բացակայությամբ, մոտիվացիայի պակասով: Արդյունքում համաքաղաքային մարզամշակութային միջոցառումները սակավաթիվ են, առկա է անտարբերություն և ներգրավվածության պակաս, իսկ իրականացվող միջոցառումները հիմնականում կրկնվում են և բազմազան չեն[8]: Երիտասարդությանն առնչվող հաջորդ հիմնախնդիրը, որը ներկայացված է ՀԶԾ-ում, վերաբերում է ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսման կազմակերպչական աշխատանքների պակասին, որը պայմանավորված է առողջ ապրելակերպի խրախուսման մեխանիզմների բացակայությամբ, ոլորտի նկատմամբ դրական վերաբերմունքի պակասով, անուշադրությամբ, ոչ նպատակային աշխատանքով: Արդյունքում, համաձայն ՀԶԾ-ի, երիտասարդների շրջանում առկա է հիվանդությունների աճ, իսկ իրականացվող միջոցառումները ոչ նպատակային են և կրում են ձևական բնույթ:

ՀԶԾ-ում որպես համայնքի զարգացման խոչընդոտ և դժվարություն է ներկայացվում նաև համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպման նախաձեռնությունների պակասը, ոչ ճիշտ համագործակցությունը, իրազեկման պակասը, որը պայմանավորված է համապատասխան կառույցների աշխատանքի անարդյունավետությամբ և համայնքային բյուջեում խնդրի լուծմանն ուղղված ֆինանսական միջոցների սղությամբ: Արդյունքում, համաձայն ՀԶԾ-ի, երիտասարդների շրջանում առկա է հոսք դեպի մայրաքաղաք Երևան, անտարբերություն, հարմարվողականություն և նորարական գաղափարների հետընթաց:

Երիտասարդական հիմնախնդիրներին որոշակի անդրադարձ է կատարվում նաև համայնքի տարեկան աշխատանքային պլաններում: Մասնավորապես, համայնքի 2019 թվականի Տարեկան աշխատանքային պլանում ներկայացված է համայնքի զարգացման տեսլականը, որտեղ անդրադարձ է կատարվում նաև երեխաների և երիտասարդների զարգացմանը, ինչի հիմնական ուղղություն է դիտարկվում համապատասխան ենթակառուցվածքների զարգացվածության բարձր մակարդակի ապահովումը (նախադպրոցական և դպրոցական հաստատություններ, մշակույթի տուն և այլն) և համայնքում երիտասարդական կրթական և ժամանցային կենտրոնների առկայությունը[9]:

[8] Ճամբարակ բազմաբնակավայր համայնքի 2018-2022թթ. զարգացման հնգամյա ծրագիր

[9] Ճամբարակ բազմաբնակավայր համայնքի 2019 թվականի Տարեկան աշխատանքային պլան, «Համայնքի տեսլական» բաժին

Համայնքի 2019 թվականի Տարեկան աշխատանքային պլանում «Համայնքի ոլորտային նպատակները» բաժնում ներկայացված է մեկ ոլորտային ուղղություն, որն ուղղակի վերաբերում է երիտասարդությանը: Այս ոլորտային նպատակի ներքո սահմանվում է, որ անհրաժեշտ է կազմակերպել համայնքի մշակութային կյանքը, խթանել միջոցառումներին բնակիչների ակտիվ մասնակցությունը: ՏԱՊ-ի այս ոլորտն ապահովված է համապատասխան ֆինանսական միջոցներով, որի համար 2019 թվականի համար հատկացված է **21464,5 հազ. դրամ**: 2018 թվականի նկատմամբ այս ոլորտի համար հատկացված գումարի չափն աճել է: Մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների համար 2018 թվականին հատկացվել է 13048.5 հազար ՀՀ դրամ:

Համաձայն համայնքապետարանի ներկայացուցիչների և ավագանու անդամների հետ իրականացված խորին հարցազրույցների՝ երիտասարդների հիմնախնդիրներին ուղղված միջոցառումների իրականացումը հիմնականում դուրս է մնում ցանկից համայնքային բյուջեի սղության պատճառով: Համայնքային բյուջեի հիմնական մասն ուղղվում է համայնքում ենթակառուցվածքային հիմնախնդիրների լուծմանը և վարչական ծախսերին: Ֆինանսական միջոցների սահմանափակության պատճառով համայնքապետարանը չի կարողանում համալիր իրականացնել երիտասարդական միջոցառումներ:

Համայնքապետարանում ներկայումս չկա կոնկրետ որևէ ծրագիր, որն անմիջական ուղղված կլինի երիտասարդների հիմնախնդիրների լուծմանը և կարիքների բավարարմանը: Համայնքապետին կից չի գործում նաև երիտասարդական խորհրդակցական որևէ մարմին կամ ակտիվ խումբ: Սակայն, համաձայն համայնքապետարանի ներկայացուցիչների և ավագանու անդամների, համայնքապետարանը համագործակցում է տեղական երիտասարդական հասարակական կազմակերպությունների հետ և աջակցում է նրանց, միևնույն ժամանակ ծրագրեր է իրականացնում տեղում գործող միջազգային կազմակերպությունների հետ:

«Ունենք ակտիվ համագործակցություն Վորլդ Վիժնի տարածքային գրասենյակի հետ: Տնտեսական զարգացման ծրագրերի շրջանակում իրականացվել է համայնքում մի շարք դասընթացներ երիտասարդների հետ: Դասընթացի իմաստն այն էր, որ երիտասարդները իրազեկ լինեն և ակտիվ: Եղել են անգլերենի դասընթացներ, տուրիզմի հետ կապված բազմաբնույթ դասընթացներ: Իրականցվում են միջմշակութային դասընթացներ, միջոցառումներ»

Ճամբարակի համայնքապետարանի ներկայացուցիչ, հատված խորին հարցազրույցից

«Համայնքապետարանը համագործակցում է տեղական երիտասարդական հասարակական կազմակերպությունների հետ, ունենք ակտիվ երիտասարդական ոչ ֆորմալ խմբեր, որոնք ևս ակտիվ գործունեություն են ծավալում համայնքում և համայնքապետարանը ամեն կերպ փորձում է աջակցել նրանց»

Ճամբարակի համայնքապետարանի ներկայացուցիչ, հատված խորին հարցազրույցից

«Այս տարի դիմել են մեզ երիտասարդներ, խումբ են կազմել և ցանկանում են հասարակական կազմակերպություն բացել, որը աշխատելու է գյուղի զարգացման, տնտեսական գծով: Այս պահին այդ խումբը ստեղծվում է»

Գյուղական համայնքի վարչական ղեկավար, հատված խորին հարցազրույցից

«Կան և՛ նախաձեռնող խմբեր, և՛ երիտասարդական կազմակերպություններ, որոնց հետ սերտ համագործակցություն ունենք, նույնիսկ Դպրաբակում «Գետիկի հովտի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպության հետ վերջերս իրականացրեցինք ամանորյա ծրագիրը, համայնքապետարանի կողմից գումար նվիրաբերվեց կազմակերպությանը որպեսզի վերջինս կազմակերպի ամանորյա միջոցառումներ համայնքի երեք գյուղական բնակավայրերում ու շատ լավ ստացվեց:

Ճամբարակի համայնքապետարանի ներկայացուցիչ,
հատված խորին հարցազրույցից

Համաձայն համայնքապետարանի ներկայացուցիչների հետ խորին հարցազրույցների՝ ՏԻՄ գործունեության վերաբերյալ երիտասարդների իրազեկումը հիմնականում իրականացվում է համայնքային կայքի և սոցիալական ցանցերի միջոցով: Միևնույն ժամանակ համայնքապետարանի ներկայացուցիչները նշել են, որ համայնքի խոշորացման գործընթացից հետո ավելի շատ երիտասարդների են ներառել տեղական ինքնակառավարման ապարատում և համայնապետարանի ենթակայության տակ գտնվող կառույցներում:

«Համայնքապետարանում խոշորացման գործընթացին զուգահեռ նաև թարմացվել է աշխատակազմը: Արդեն երիտասարդ կադրեր են ներգրավվում՝ բանիմաց և խելացի: Փորձել ենք համայնքապետարանի աշխատակազմում ընդգրկել երիտասարդների և սա վերաբերվում է մեր մյուս ենթակառույցներին նույնպես: Փորձում ենք առաջնորդել այն երիտասարդներին, ովքեր ցանկություն ունեն իրենց ծննդավայրում ապրելու և իրենց մտավոր և ֆիզիկական ունակություններն ի շահ իրենց ծննդավայրի օգտագործելու»

Ճամբարակի համայնքապետարանի ներկայացուցիչ,
հատված խորին հարցազրույցից

Երիտասարդական քաղաքականության համատեքստում մարզային կառավարման մակարդակում մարզպետին կից գործում է երիտասարդական խորհուրդ, որն անմիջական աշխատում է մարզպետի հետ և սերտ համագործակցում է մարզպետարանի այլ բաժինների հետ նույնպես: Մարզպետարանը համարվում է երիտասարդական քաղաքականության իրականացնող մարմին, իսկ երիտասարդական քաղաքականության մշակող մարմինը նախկինում եղել է Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը:

«Մարզպետարանը հիմնականում իրականացնում է երիտասարդության հարցերով պետական քաղաքականություն, այսինքն, մենք մշակողը չենք, մենք իրականացնողն ենք: Այդ առիթով մենք համագործակցում ենք բազմաթիվ հասարակական կազմակերպությունների՝ մասնավորապես երիտասարդական կազմակերպությունների հետ, երիտասարդներին մասնակից ենք դարձնում մարզպետարանի կողմից կազմակերպված և՛ մշակութային, և՛ մարզական միջոցառումներին»:

Գեղարքունիքի մարզպետարանի ներկայացուցիչ, հատված
խորին հարցազրույցից

Համայնքներում՝ տեղական ինքանակառավարմանը երիտասարդների ներգրավմանն ուղղված քայլերի ցանկում խորին հարցազրույցներին մասնակցած մարզպետարանի ներկայացուցիչները նշել են, որ մարզպետարանների և Տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից համայնքներում ընտրվել են տնտեսական զարգացման պատասխանատուներ, որոնց հիմնականում հենց համայնքային ակտիվ երիտասարդներն են, որոնց միջոցով էլ համայնքները կարող են զարգանալ:

Ինչ վերաբերում է մարզպետարանի և համայնքների կողմից իրականացվող ծրագրերին, որոնք այս կամ այն կերպ անդրադառնում են երիտասարդների հիմնախնդիրներին և կարիքներին, ապա, համաձայն առանցքային տեղեկատուների հետ իրականացված խորին հարցազրույցների, գերակշռող են մշակութային և մարզական բնույթի միջոցառումները՝ ներառելով հիմնական պետական տոների հետ կապված միջոցառումներ կամ մարզական խաղերի և մրցույթների անցկացումը:

«Երիտասարդներին նվիրված մարզում անցկացվում է զորակոչային, նախազորակոչային մարզական խաղեր, ռազմամարզական խաղեր, անցկացվում են նաև գյուղական մարզական խաղեր, որում հիմնականում մասնակցում են երիտասարդները, կամ հանրապետական միջոցառումներից՝ մարզական ընտանիք խաղին մասնակցում են տարեկան շուրջ 140-160 ընտանիքներ: Կան նաև մշակութային այլ ծրագրեր»

Գեղարքունիքի մարզպետարանի ներկայացուցիչ, հատված խորին հարցազրույցից

«Մենք ճիշտն ասած ուսումնասիրություններ կատարել ենք, կան համայնքային բյուջեներում երիտասարդների վերաբերյալ հատվածներ: Հիմնականում նախատեսվում է պետական տոների հետ կապված միջոցառումների համար ֆինանսական միջոցներ: Կան համայնքներ, որ իրենց բյուջեներում նախատեսված է մարզական, երիտասարդական միջոցառումների կազմակերպման համար որոշակի գումարներ»

Գեղարքունիքի մարզպետարանի ներկայացուցիչ, հատված խորին հարցազրույցից

4.2 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿՅԱՆՔՈՒՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Տեղական ինքնակառավարման մարմիններում և համայնքային կյանքում երիտասարդների ներգրավվածության ավելացման հեռանկարների վերաբերյալ կարծիքներ են հավաքագրվել երիտասարդներից ֆոկուս խմբային քննարկումների և քանակական դեմ առ դեմ հարցումների միջոցով:

Քանակական դեմ առ դեմ հարցումների արդյունքներով երիտասարդների մասնակցության ավելացման համար վերջիններս առավել հաճախ առաջարկել են համայնքում կազմակերպել քննարկումներ, սեմինարներ, խմբակներ, իրականացնել երիտասարդական միջոցառումներ և նոր ծրագրեր, ապահովվել երիտասարդների իրազեկվածությունը և ապահովել զբաղվածությամբ: Հարցվողները նաև առաջարկել են կիրառել երիտասարդների ներգրավվածության խրախուսման մեթոդներ, հաշվի առնել երիտասարդների կարծիքը որոշումների կայացման գործընթացներում, առաջակցություն ցուցաբերել երիտասարդական նախաձեռնություններին: Առաջարկների թվում է եղել նաև երիտասարդական կենտրոնի և համայնքապետին կից երիտասարդական խորհուրդի ստեղծումը: Քանակական դեմ առ դեմ հարցումների արդյունքում երիտասարդները առաջարկել են նաև համաչափ ակտիվություն ապահովել բնակավայրերի միջև և միջոցառումներ կազմակերպել նաև հեռավոր գյուղական բնակավայրերում, ուժեղացնի գյուղական բնակավայրերի և Ճամբարակ քաղաքի միջև կապը: Հնչել էլ նաև առավել գործնական առաջարկ, ինչպես օրինակ հանրային քննարկումներին կամ ավագանու նիստերին մասնակցության համար երիտասարդներին տրանսպորտային կապով ապահովելն է (Գրաֆիկ):



Գրաֆիկ 25. Երիտասարդների մասնակցության ավելացման ուղղությամբ համայնքապետարանի աշխատանքների ուղղությունները ըստ հնչած պատասխանների բաշխման

Ընդհանուր առմամբ ամփոփելով Տեղական ինքնակառավարման մարմիններում և համայնքային կյանքում երիտասարդների ներգրավվածության ավելացման հեռանկարների վերաբերյալ երիտասարդների և հիմնական առանցքային տեղեկատուների կողմից ներկայացված կարծիքները՝ զարգացմանն ուղղված առաջարկները կարող եք ներկայացնել հետևյալ հիմնական ուղղություններով՝

Իրազեկման միջոցառումների և ներգրավման մեխանիզմների ընդլայնում: Այս առումով երիտասարդների կողմից առաջարկվում է ապահովել ավագանու նիստերի և հանրային քննարկումների վերաբերյալ օրակարգային թեմաների նախնական իրազեկում երիտասարդների շրջանում, որը կարող է լինել ինչպես սոցիալական ցանցերի և պաշտոնական կայք էջերում տեղադրվող նյութերի, այնպես էլ տպագրված հայտարարությունների միջոցով: Երիտասարդների կողմից առաջարկվում է նաև համայնքներում և բնակավայրերում ձևավորվել ակտիվ երիտասարդական խմբերի, որոնք ոչ ֆորմալ ներգրավված կլինեն ՏԻՄ աշխատանքներում, կմասնակցեն բյուջեի քննարկումներին և իրազեկված կլինեն ՏԻՄ գործունեությանը: Այս ակտիվ երիտասարդական խմբի անդամների միջոցով էլ կապահովվելի երիտասարդների առավել լայն շերտերի հետ ՏԻՄ առավել արդյունավետ կապը և հաղորդակցությունը, իսկ համայնքում բնակվող մյուս երիտասարդները կկարողանան այս երիտասարդական ակտիվ խմբերի միջոցով իրազեկված լինել ՏԻՄ և համայնքային իրադարձություններին:

Համայնքապետերին կից երիտասարդական խորհուրդների ստեղծման անհրաժեշտությունը շեշտադրվել է նաև առանցքային տեղեկատուների կողմից:

«Մարզպետին կից գործում է երիտասարդական խորհուրդը, որի կազմում ընդգրկված են 48 անդամներ: Բացի երիտասարդներից խորհրդում ներգրավված են նաև համայնքի ղեկավարների տեղակալներ, համայնքապետարանի աշխատողներ: Այս առումով ես կարծում եմ, որ մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդից բացի պետք է նաև համայնքի ղեկավարներին կից լինեն երիտասարդական խորհուրդներ, քանի որ այդ հիմնախնդիրների հիմքը համայնքներից է սկսվում: Ելնելով նաև այն հանգամանքից որ համայնքները իրենք տիրապետում են իրենց ֆինանսական միջոցները իրենք ավելի օպերատիվ կարող են երիտասարդական հարցերին ավելի օբյեկտիվ ու ավելի կառուցողական լուծումներ տան»:

Գեղարքունիքի մարզպետարանի ներակայացուցիչ, հատված խորին հարցազրույցից

«ՏԻՄ-երը պետք է առաջնահերթություն տան երիտասարդներին՝ ներգրավվածություն ապահովեն ցանկացած հանրային աշխատանքներում, իրազեկեն երիտասարդներին, լավ ու վատ կողմերը քննարկեն երիտասարդների հետ, որպեսզի վերջիններս էլ իրենց կարևոր զգան ու շահագրգռված լինեն աշխատել ՏԻՄ-ի հետ»:

Հասարակական կազմակերպության ներակայացուցիչ, հատված խորին հարցազրույցից

Զբաղվածության հնարավորությունների ավելացում երիտասարդների շրջանում: Երիտասարդների զբաղվածության հնարավորությունների ավելացումը համաձայն նրանց շրջանում իրականացված ֆոկուս խմբային քննարկումների արդյունքների կարող է տեղի ունենալ ձեռնարկատիրական գործունեության խրախուսման, տուրիզմի զարգացման, գյուղատնտեսական տեխնիկայի տրամադրման միջոցով, և այսպիսի աշխատանքներում վերջիններս ներգրավվածության խրախուսման միջոցառումների իրականացման արդյունքում: Առանցքային տեղեկատուների հետ խորին հարցազրույցների ընթացքում նույնպես հնչել է կարծիք, որ համայնքային կյանքում երիտասարդների ներգրավվածության ավելացումը կարող է տեղի ունենալ նաև վերջիններս փոքր և միջին ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու միջոցով աջակցության տրամադրման շնորհիվ: Ներկայումս, համաձայն Գեղարքունիքի մարզպետարանի ներկայացուցչի, մարզպետարանի կողմից իրականացվում է նմանատիպ ծրագիր, որին կարող են մասնակցել համայնքի երիտասարդները:

«Մեզ մոտ աշխատատեղերի բացակայության խնդիր է: Հիմա կա լավ հնարավորություն փոքր և միջին ձեռներեցությամբ զբաղվելու, եթե լավ գաղափարներ ունենան ինչ-որ բիզնես ծրագրեր ներկայացնեն, մենք պատրաստ ենք ուղարկել նրանց դասընթացների, որ սովորեն բիզնես ծրագրեր գրել և հետագայում այդ ծրագրերը իրականացնեն: Ունենք այդ հնարավորությունները, բայց ցավոք սրտի քիչ են դիմողները»

Գեղարքունիքի մարզպետարանի ներկայացուցիչ, հատված խորին հարցազրույցից

Սոցիալական տարածքների ստեղծում: Ֆոկուս խմբային քննարկումների ընթացքում երիտասարդների կողմից շեշտադրվող կարևոր հիմնախնդիրներից մեկը վերաբերում էր համայնքում սոցիալական տարածքների բացակայությանը, ինչի պատճառով երիտասարդները հիմնականում մեկուսացած են, չեն կարողանում փոխանակել նոր գաղափարներով և ձեռնարկել ընդհանուր գործեր: Այսպիսի տարածքների և ընդհանուր հարթակների բացակայության պատճառով էլ երիտասարդները դառնում են առավել անինքնավստահ և պասիվ: Երիտասարդներն առաջարկում են այնպիսի տարածքների ստեղծում, որտեղ նրանք «կարողանան ծանոթանալ, շփվել ինչ-որ հարցեր քննարկել» կամ կազմակերպվեն այնպիսի միջոցառումներ, որոնց ընթացքում նրանք կկարողանան «որևէ կարևոր թեմա քննարկել»: Այսպիսի սոցիալական տարածքներ կարող են լինել երիտասարդական կենտրոնները, խմբակները, ժամանցի վայրերը, «co-working» տարածքները և այլն:

«Ամենաակտիվ գյուղը մերը կլինի, եթե ամեն ինչին մասնակցեն մեր երիտասարդները, գյուղի երեխաները կարող է ամսվա մեջ մի անգամ գնան քաղաք գան, տարբերությունները շատ մեծ է, չեն տեսնում, չեն զարգանում, կոնկրետ ես քսան տարեկան եմ, գնում եմ քաղաք, չգիտեմ՝ ինչ անեմ, լավ կլինի էքսկուրսիաներ լինի, դուրս գան շփվեն: Չեմ ասում թող ամեն ինչը պետությունը անի, թող իրանք ինչ-որ բան տրամադրեն, ինչ-որ բանով էլ մենք կօգնենք»

Արական սեռի երիտասարդ, հատված ֆոկուս խմբային քննարկումից

Ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական հնարավորությունների ստեղծում երիտասարդների համար: Հաշվի առնելով, որ համայնքում չի գործում միջին մասնագիտական կամ բարձրագույն կրթական հաստատություն, իսկ համայնքից դուրս կրթության կազմակերպումը ֆինանսապես հասանելի է համայնքի ոչ բոլոր երիտասարդներին՝ վերջիններս առաջարկել են համայնքում ավելացնել ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական հնարավորությունները, որը կարող է լինել դասընթացների, սեմինարների կազմակերպման, արհեստագործական խմբակների իրականացման, օտար լեզուների կամ մասնագիտական այլ կենտրոնների ստեղծման միջոցով: Երիտասարդները նաև առաջարկել են ուշադրություն դարձնել մասնագիտական կողմնորոշմանը և աջակցություն ցուցաբերել մասնագիտության ընտրության առջև կանգնած երիտասարդներին: Առաջարկվում է մասնագիտական կողմնորոշման սեմինարների կազմակերպում երիտասարդների շրջանում:

«Երիտասարդների համար պետք է սեմինարներ, քննարկումներ կազմակերպել, օգնել ծրագրերի իրականացմանը, բիզնես հիմնելու, վարելու մեթոդների վերաբերյալ ավելի հաճախակի կազմակերպվի քննարկումներ: Այսինքն որ մարդ հասկանա, որ ինքը մենակ չի»

Գեղարքունիքի մարզպետարանի ներակայացուցիչ, հատված խորին հարցազրույցից

«Այ ասում են օտար լեզու չգիտենք, դասընթաց լիներ մի քանի երիտասարդ գնային լեզուներ սովորեին, հիմա մեր երիտասարդները դպրոցը ավարտած են, էն ժամանակ օտար լեզու չի եղել, չեն սովորել, բայց հիմա ցանկություն կա, հենց տուրիզմի զարգացման համար պետք է երիտասարդներին սովորեցնել օտար լեզուներ»

իգական սեռի երիտասարդ, հատված ֆոկուս խմբային քննարկումից

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ելնելով հետազոտության արդյունքներից՝ կատարվել են հետևյալ եզրակացությունները՝

- Երիտասարդների կողմից առավել կարևորված համայնքային հիմնախնդիրները ներառում են համայնքային ենթակառուցվածքների ոչ բարվոք վիճակը կամ բացակայությունը, զբաղվածության և աշխատատեղերի բացակայությունը համայնքում, սոցիալ-մշակութային կյանքի պասիվություն:
- Աշխատանքի և զբաղվածության հնարավորությունների բացակայությունը, և դրա հետևանքով առաջ եկող ֆինանսական և սոցիալական դժվարությունները հանդիսանում են երիտասարդի՝ որպես անձի և իր ընտանիքի առջև ծառացած ամենակարևոր հիմախնդիրը համայնքում:
- Համայնքում երիտասարդների անձի զարգացման և ինքնադրսևորման հնարավորությունները սահմանափակ են, ինչն ընդհանուր առմամբ հանգեցնում է երիտասարդների մոտիվացիայի նվազման, մեկուսացման և ընդհանուր առմամբ երիտասարդական ներուժի թերի օգտագործման:
- Միջին մասնագիտական և բարձրագույն կրթական հաստատությունների բացակայությունը համայնքում լրացուցիչ դժվարություններ է ստեղծում կրթություն ստանալ ցանկացող երիտասարդների համար՝ պայմանավորված ֆինանսական միջոցների սղությամբ:
- Համայնքի երիտասարդները հիմնականում չեն տիրապետում այն հմտություններին, որոնք կարող են ծառայեցնել ի շահ իրենց և համայնքի զարգացման, ինչպես օրինակ տուրիզմի զարգացման նախաձեռնություններն են, տարբեր հասարակական կազմակերպությունների հետ աշխատելու հմտությունները:
- Ընդհանուր առմամբ երիտասարդներն ունեն ցածր տեղեկացվածություն տեղական ինքնակառավարման ոլորտի և տեղի ունեցող գործընթացների վերաբերյալ
- Համայնքի կառավարմանը վերաբերող տարբեր հարցերի վերաբերյալ ավելի շուտ իրազեկված կամ լիովին իրազեկված են եղել հարցմանը մասնակցած երիտասարդների շուրջ 30%-ը: ՏԻՄ-երի և համայնքային կյանքում մասնակցում են երիտասարդների շուրջ 25%-ը:
- Որպես ՏԻՄ և համայնքային կյանքում չներգրավվելու հիմնական պատճառը երիտասարդները նշել են իրազեկվածության պակաս, ժամանակի սղությունը և մասնակցության արդյունքների վերաբերյալ թերահավատությունը:
- Ճամբարակի համանքապետարանի կողմից չի իրականացվում երիտասարդական հիմնախնդիրների նկատմամբ համակարգված քաղաքականություն, իսկ իրականացվող միջոցառումները հիմնականում կրում են հատվածական բնույթ և լիարժեք չեն անդրադառնում երիտասարդների հիմնախնդիրներին և կարիքներին:
- Երիտասարդների հիմնախնդիրներին և կարիքներին ուղղված մարզպետարանի և համայնքապետարանի կողմից իրականացվող հիմնական միջոցառումները մշակութային և մարզական բնույթի են՝ ներառելով հիմնականում պետական տոների հետ կապված միջոցառումներ կամ մարզական խաղերի և մրցույթների անցկացում: